Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 9510

# ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՅԻ

# „ԱՀԼԳ ՓԻԶԱՀՈՒ ԵՐԳԵՐԸ“

«Երգը մի տեսակ զանգակ է, որ թմրածներին զարթեցնում է, և մարդու միտքն ու հոգին գրաւում դէպի իրան . . . »։

Ադ. Մխիթար

*Երրորդ տպագրութիւն լրացուցած 3 հատորից*

Հրատարակիչ

**ԳԷՈՐԳ Կ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ**

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի

Типографія М. Вартаняца, Вельям. ул. д. 7.

1901

13 APR 2011
891.99
Ա-52

# ԱԳԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՅԻ

# „ԱԼԼԳ ՓԻԶԱՀՈՒ ԵՐԳԵՐԸ“

Երգը մի տեսակ զանգակ է, որ թմրածներին զարթեցնում է, և մարդու միտքն ու հոգին զբաւում դէպի իրան . : . »:

Ադ. Մխիթար

Հրատարակիչ՝

**ԳԷՈՐԳ Կ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ**

1001
4698

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի

Типографія М. Вартанянца, Вельям. ул. д. №7.

1901

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱՅԻ ԳՐԱԳԱՐԱՆ
Ա. Սեմսոնեանի անվան

61-558

Дозволено Цензурою. Тифлисъ 6-го Марта 1901 г.

## ՅԱՐԱՋԱՐԱՆ.

Ձեր առաջն է գալիս սիրելիք, մի ժողովրդական երգչի զանազան բանաստեղծութիւնները. մի երգչի՝ որը բոլորովին գրել, կարդալ չգիտէ, այլ Աստուածային բնատուր գեղեցիկ ձիրքով նուիրուել է ժողովրդական երգչութեան—բանաստեղծութիւնները հիւսելով. արդ՝ թէ որպէս կ՚ընդունուին խեղճիս հիւսուածքը՝ այդ ցոյց կրտայ մեզ մօտիկ ապագան, իսկ եթէ բարեբաղդաբար որ և իցէ հաճութեամբ ընդունուին՝ այն ժամանակ ես ինձ, անդրադէտիս—անբաղդիս, յոյժ բաղդաւոր պիտի համարիմ, որ կարողացայ գրքերի շարքում տեսնել և իմ երգերը։

*Ժողովրդական երգիչ՝ Ալէքսանդրապօլցի*

**«ԱՀՐԳ ՓԻԶԱՀԻ»**

1888 թ.

ТИФЛИССКАЯ ОБСЕРВАТОРІЯ

ՔԱՆԻ ՈՐ ԻՄ ԵՐԳԵՐՍ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԵՄՈՒԼԻ ԱՅՍ ՄԻ ԵՐԳԸ ԱՅՍ ՊԱՏՃԱՌԱՒ ՁԱՐՈՒՆԱԿԵՑԻ։

Վա՛յ կարդամ ինձ նման հովիւի գլխին,
Ամեն մի ոչխարս սարէսար մնաց,
Չեմ կարող լիափառել ժայռերի մթին,
Գառներիս հօտը անմխիթար մնաց։

Գանձ չ՝ունեմ. որ խաշներիս խոտ գնեմ ես,
Կամ նրանց մօտ կառավարիչ դնեմ ես,
Որ պահպանեմ մինչի գարուն հանեմ ես,
Նրանց մասին անձս ցաւագար մնաց։

Ոչխարներիս խեղճ գառները լալում են,
Սրտիս միջի էլած եղ հալում են,
Գայլերն էկած ոչխարներս խլում են,
Սրտիս պաշարներ նետահար մնաց։

Վերջապէս չըտաբաւ բաղդիս անիւը,
Մոռացել եմ ունեցածիս հաշիւը,
Ինձ նման կարճատես և կոյր հովիւը,
Ֆիզահը վէրքով լի ապիկար մնաց։

# 1. ՀՈՂԱԳՈՐԾ

Հողագործ գարունն եկաւ, արտերդ մնաց ցանելու։
Ջանք արա՛ շուտով տանես լծկանդ խամից հանելու,
Կարծեօք թէ դու փոդ ունէս, քեզի սերմացու գնելու,
Երկաթէ խոփը սրէ, գնայ հողերդ վարելու.

Սրթնացիր իմ հողագործ, ժամանակը չէ քնելու. 1.
Քարմաններդ պատրաստ է, բարդոցի կեմեր մանելու։ 2.

Քու մտքիդ խորհուրդները, թշնամիքը շուտ լսեցին,
Մէկը տասը շինելով, գնացին այլոց պատմեցին,
Ոչ թէ միայնակ քեզի, այլ և որդուդ բամբասեցին,
Դրացիքդ քեզնից շուտ, իրանց գործը սկսեցին։

Զարակամ մարդիկները, կուզեն որ դու միշտ ծոյլ մնաս,
Չեն ցանկայ որ իրանցից շուտով զարթնիս գործի գնաս,
Ջանք արա՛, որ ժիր լինիս, ընկերիցդ յետ չըմնաս,
Իմ խօսքերս թող լինին, քեզի համար անմոռաց դաս։

---

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը.

Մի սպաս, իմ սիրելիս, ինչու են քու աչքերդ թաց,
Աշխատիր որ ձեռք բերես, քեզի համար մի պատառ հաց,
Որ չասեն հողագործի չարչարանքը ի զուր գնաց,
Կամ թէ չէ Ֆիզահու պէս, գրպանը խիստ դատարկ մնաց։

## 2. ՅԻՄԱՐՄԱՐԴ.

Ցիմարին որ հազար անգամ խրատ տաս,
Ոչինչ չի հասկանայ, գլուխը հատ է,
Այդպէսն է ազգի մէջ մի մեծ պատուհաս,
Որովհետև տուն քանդելու պատրաստ է։

Ամեն անգամ մարդոց մեծ վնաս կուտայ,
Դը խօսք խելքէն դուրս ինչպէս երևայ,
Շի մտածէ իւր խօսած բանի վերայ,
Ըստորում նա, եզի նման դրաստ է։

Ընդունակ չէ գեղեցիկ խօսք խօսելու,
Ականջ չունի բարի լուրեր լսելու,
Քաղցր լեզուով շատ մարդիկ համոզելու,
Ֆիզահ, մի թէ նորա համար այդ փաստ է։



## 3. ՈԽՍՈԽՄ.

Կեցցես, դու սուրբ ուսում, կեցցես ինձ համար,
Որ իմ ազգիս համար պարզև բերիր դու,
Իմ տկար լեզուս դու արիր խիստ ճարտար,
Տրտում, տխուր դէմքիս արև բերիր դու։

Դու ինձի ինչ տեղից, ինչ տեղ հասցուցիր,
Վարդի նման, իբրև ծաղիկ բուսցուցիր,
Լեղու տարով, սոխակի պէս խօսցուցիր.
Զորացած արմատիս տերև բերիր դու։

Յուսամ դուն ես ինձ միտք տուող բնական,
Ամեն տեղ յարգուած ես, դուն ես աննման,
Շատ տգէտներ քեզնով եղան գիտնական,
Ֆիզահուս չոր այդուն անձրև բերիր դու։

## 4. ԳԵՂԵՑԿՈՒՀԻ

Ով սիրուն, աշխարհը քեզի չի մնայ,
Քեզ նման շատերը եկան–գնացին,
Լաւութիւնը միայն անմահ կը մնայ,
Կեանքէդ աւել սիրէ քու վատ դրացին։

Աշխատէ բարութեան ջանք ճարես քեզի,
Երկնից օթևանում կեանք ճարես քեզի,

Հոգուտ հանգստարան՝ վանք ճարես քեզի,
Երբէք մարդ կարօտ չէ քու աղ ու հացին։

Վարդը քեզնից շատ սիրուն էր թառամաւ,
Նորա պարտիզպանը մնաց անհամբաւ,
Սոխակը իւր սրտին ճարեց հազար ցաւ,
Իրա վարդարանը ազռաւներ լցին։

Աշխարհիցը զնացողներն ինչ տարան,
Պատանքից աւելի չունէին վրան,
Ամենքիս էլ վերջին տունն է գերեզման,
Ֆիզահն էլ անդագաղ այնտեղ թաղեցին։

## 5. ԲԱՂԴ.

Իմ անիրաւ բաղդս ինձի,
Ցարէց տարի մոռանում է,
Չի դառնում իմ վախտս ինձի,
Կամաց կամաց հեռանում է։

Տուել է ինձ Աստուած ձիրքեր,
Չինում եմ պարզ լեզուով երգեր,
Նորոգվում է իմ հին վէրքեր,
Ինձ կրակի պէս վառում է։

Իրաւ է քիչ ուսում ունիմ,
Միայն բաղդից պարգև չունիմ,



Այս գանգատը ես ում տանեմ,
Կարդացողը կռանում է։

Այլոց բարի վիճակ կուտայ,
Փառք ու լաւ ժամանակ կուտայ,
Մէկին անթիւ վաստակ կուտայ,
Ֆիզահուս մօտ քօռանում է։

## 6. ԱՆԲԱՂԴ ՄԱՐԴ.

Ես ում որ հոգւով սիրեցի,
Նա ինձ համար վատ դուրս եկաւ,
Կեանքս նրան նուիրեցի,
Նա թերահաւատ դուրս եկաւ։

Քանի բարեկամ ճարեցի,
Խնդիրները կատարեցի,
Զօր ու գիշեր խրատեցի,
Նա խելքից աղքատ դուրս եկաւ։

Սիրտս վիշտ ու կրակ լցի,
Ֆիզահն եմ ես Կարնեցի,
Ձեռքս որ ծառին ձգեցի,
Տակից փուտ արմատ դուրս եկաւ։

## 7. ՍԻՐՈՒՀԻ.

Այսօր ես մի սիրուն տեսայ,
Բնութեամբ ազնիւ, խոնարհ էր,
Բարև տուի հետը խօսայ,
Լեզուն լեզուիցս ճարտար էր։

Եսթերի նման սիրուն էր,
Երեսը սպիտակ ձիւն էր,
Հագի հանդերձը նաշխուն էր.
Մատանիքը անգին քար էր։

Պատկերը ունէր գեղածիծաղ,
Կը նմանէր լուսաշաղախ,
Աչք ու ունքն էր անշամանդաղ,
Իւր անունը Հեղինար էր։

Ինքն էր վարդը լորի նման,
Աչքերն էր պիլսոնի նման,
Նայուած էր խոշորի նման,
Գիզահին մօտը անճար էր։

## 8. ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ 1885 ԹՈՒԱԿԱՆԻ.

Ման կուգայ ժողովուրդը, ողորմելի աղքատի պէս։
Գործերը աշողակ չէ, սրտերն յուսահատի պէս,



Զախորդութեան ձեռքիցը ամենը մի տեղ փախչելով,
Մեր քաղաքն էլ դառել է, մի կղզի անապատի պէս։

Հարուստն էլ աղքատի պէս, չունեմ ասելը տրվեցաւ,
Արտերը կոտրուելով, դառել է փլած պատի պէս,
Քանի որ մեր գործերը այսպէս դանդաղ առաջ կերթայ,
Անձերիս վայ կարդալով, աղբանք ծեր նահապետի պէս։

Ով անմահ, Ցէր Արարարիչ աշխարհիս տուր դրացուս։
Որ Գիզահի երդիչս բարձրանամ Արարատի պէս։

## 9. ՂՕՉՄԱՅ.

Մէկ դառի երեսդ տեսնեմ ով սիրուն,
Ես սոխակ եմ, դուն էլ վարդ ես ինձ համար,
Աչքերդ ու այտերդդ է կարմրագոյն,
Պատանի—երիտասարդ ես ինձ համար։

Գիշերը, ցերեկ ես քու սէրդ կը քաշեմ,
Սիրոյդ կրակովը անձս կը խաշեմ,
Հերիք չէ՞ քեզ համար իմ կեանքս մաշեմ,
Հա՛, հասկացայ, մասմակարդ ես ինձ համար։

Քու Գիզահդ եմ, ինձ մի լուր տուր անուշիկ,
Վարդ այտերէդ մի համբոյր տուր անուշիկ,
Քու ձեռքովդ ինձ մի ջուր տուր անուշիկ,
Խոհեմ, հեզիկ, դուռ մի մարդ ես ինձ համար։

## 10. Ի Մ ՕՐԵՐ.

Զուր կանցանի օրերս, տրտում, տխուր գիշեր ցերեկ,
Անձնազոհ եմ ես եղել, վէրքով հարիւր գիշեր ցերեկ,
Իմ սիրոյ ողջոյնները ամենևին մի ձայն չունին,
Տառապում եմ մշտապէս ճարակուր գիշեր ցերեկ։

Մի լաւ օր չը պատահեց աշխարհի մէջը խնդալի,
Աչքերիս վտակները եղաւ աղբիւր գիշեր ցերեկ,
Օտար տեղեր շրջելը մարդիկ կասեն թէ գիւրին է,
Իմ այսքան թափառելս գնաց ի զուր գիշեր ցերեկ։

Վերջապէս չխնդացի աշխարհի մէջ ինքս մի օր,
Խեղճ Ֆիզահն եմ անուսում, լեզուս է լուռ գիշեր ցերեկ։

## 11. ՔԷՉԻՉ ՕՂԼԻ.

Զուր կանցանի օրերս կեանքիցս բոլոր,
Խելագարի նման բան չեմ մտածում,
Մնացել եմ օտար տեղն ոլոր-մոլով,
Զուր տեղը ինձ համար ցաւ եմ տարածում։

Վիշտս նիզակի պէս անձս փորում է,
Հոգիս մարմնիցս անվերջ ջորում է,
Մանկութեան օրերս ի զուր կորում է.
Քանի որ ես չունեմ հիմնական ուսում։



Մնացել եմ տրտում, տխուր, մերկաբաց,
Վատ արարմունքս արաւ ինձի աւերուած,
Սիրտս ծարաւ, փորս քաղցած—առանց հաց,
Ֆիզահն եմ դաղտնիքս, չիտեմ խօսեմ ում։

## 12. ԲԱՅԹԱՎՈՒՐ.

Ունքդ է կամար թուր,
Թերթիչներդ է սուր,
Կոյս գեղածիծաղ,
Ով սիրուն, սիրուն։

Կաթդ ընտիր—մաքուր,
Ինձ թոգիր տխուր,
Լոյս անշամանդաղ,
Ո՞վ սիրուն, սիրուն։

Լեր ինձ օգնական,
Միայք տուր բնական,
Ես քեզի մատաղ,
Կոյս սիրուն, սիրուն։

Արի, իմ կեանքս,
Զուր չերթայ ջանքս,
Իմ բերանիս աղ,
Կոյս սիրուն, սիրուն։

Ցոյս տուր ինձ հնստատ,
Ցիզահդ եմ աղքատ,
Սիրէ ինձի վաղ, — ցանկրաց ոգով
Լոյս սիրուն, սիրուն։

## 13. ՈՂՈՐՄԱԾ ՄԱՐԴ.

Բարեհոգի մարդու սրտին,
Երկնային անտառ եմ ասում,
Ողորմած, մարդասէր սրտին,
Ես պտղաբեր ծառ եմ ասում։

Աղքատից բան չի չխնայէ,
Լաւ աչքով խեղճին կընայէ,
Ով ցէրոջ պատուէրը պահէ,
Նրան հեզիկ դառ եմ ասում։

Չի պակասի իրան հացը,
Ով սրբեց խեղճ որբի լացը,
Ցիզահն եմ նրա կենացը,
Օրը հարիւր ճառ եմ ասում։

## 14. ՀՐԴԵՀ 1884 Թ.

Ամին հազար ութ հարիւր ութսուն ու չորս զարունը,
Ցանկարծ ընկաւ ու վառեց, չորս հինգ խանութ
եանղունը,



Նաւթի մէջ կրակ ընկաւ, աւերուեց մարդկանց տունը
Հատի վերայ ցաւ բերեց աչքերից կտրեց քունը։

Թող միշտ յիշեն ու ողբան խեղճ Գասպարի անունը, 1,
Որ հրդեհը կործանեց նորա խանութն ու տունը։ 2.

Այնքան մարդկանց միջոցը Գասպարն էր խեղճ ու
ցաւած,
Կրակն ընկած միջոցին, մնացել էր մոլորուած,
Հանդերձներն ու մարմինը կրակով էր այրուած,
Գթա, նորա որբերին բարեխնամ Տէր Աստուած...։

Անդուրթ կրակը վառեց նորա սիրուն պատկերը,
Հազուստիցը սկսած վառուեց աչքի թերթերը,
Հազիւ զնաց հաղորդեց, իւր ծխատէր տէրտէրը,
Ինքը իսկոյն մահացաւ, տխուր մնաց ընկերը ...։

Թէ մէկ բարութիւն ունէր, իրան հետն առաւ գնաց,
Ողջ քաղաքը ասին թէ Գասպարը վառաւ գնաց,
Մարմինը աստ թողնելով, դէպ երկինք թռաւ գնաց,
Վկայում է Ցիզահիս, զուր տեղը մեռաւ գնաց...։

## 15. ՔԵԱՐԱՄԻ.

Ինձի նման աշխարհում պիղծ մարդ չը կայ,
Ամեն կողմով թշուառ վատթար, ես եմ ես,

---

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը։

Վարքովս չեմ եղել բարութեան ներկայ,
Գործիս խաբուած, չարաց աւար, ես եմ, ես։

Իմ վարքս ինձ թողեց խեղճ ու մոլորուած,
Վերջը արաւ դառն աղքատ ու զրկուած,
Քանի որ ես չար գործերու եմ տարուած,
Վիրաւորուած, խեղճ, ապիկար, ես եմ, ես։

Իմ բաղում մեղքերս համարում եմ քիչ,
Գործքս վատ է, վարքս այլոց ապականիչ,
Անպիտան Ֆիզահն եմ, չատին խրատիչ,
Գլխիցս անցած, մահին յօժար, ես եմ, ես։

## 16. ԱՐՄԵՆՈՒՀԻ.

Քեզ համար վառվում եմ ես միշտ զօր գիշեր,
Ինձի խելագար արաւ մաղերդ աղջիկ,
Կոչում եմ աչքերիդ երկնային լապտեր,
Գիսաւոր աստղիկ է ծամերդ աղջիկ։

Քեզի տեսնողները էրնէկ են տալիս,
Շատ մարդիկ ապշում են, երբ ման ես գալիս,
Ճակատիդ ծածկոցը քու, յետ բանալիս,
Ոսկեղէն կանթեղ է աչքերդ աղջիկ։

Արի եղիր Ֆիզահուս հետ համեմատ,
Որ սիրով կեանք վարես ինձի հետ ազատ,
Հասակդ փոքր է, մեծիցդ առ խրատ,
Ինչ որ պատուէր կուտայ քու մէրդ աղջիկ։



## 17. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Աշխարհի մէջ մարդ մոլորուած չի մնայ,
Թէ ունենայ ուսում և քիչ գիտութիւն,
Ուսումնական մարդը ուր կուզէ գնայ,
Ուսումով կը ճարէ նա արտօնութիւն։

Լոյս ուսումը մարդու կեանքի տերևն է,
Ընտիր խօսքը՝ գաղափարի անձրևն է,
Ուսումը իմ անձիս երկրորդ արևն է,
Կուտայ ինձ բարի վարք ու խոհեմութիւն։

Ուսեալ անձը պտղաբեր ծառ կըլինի,
Ծաղկով լեցուն, կանաչ անտառ կը լինի,
Ազգի համար մի անմեղ գառ կը լինի,
Թէ Ֆիզահն էլ ճարէ քիչ խոնարհութիւն։

## 18. ՎԱՏԽՕՍՔ.

Թշնամեաց սիրտ խոցող, դառն լուրերը,
Խանձեց բոլոր անձս կրակի նման,
Վերաս թափեց ողջ աշխարհի հուրերը,
Արագ խայթեց ինձի կայծակի նման։

Վատ խօսքերով իմ սրտիկս խոցուեցաւ,
Արդարևօս, ճարտար լեզուս զոցուեցաւ,

1001
8694

Թնդանօթի նման սիրտս լցուեցաւ,
Կայծ դիպաւ վառօդիս գնդակի նման։

Ինքս հողից չինած գաւ Ֆիզահին եմ,
Նաւավար Որ Էին նաւ Ֆիզահին եմ,
Բողոք անող սրտի ցաւ Ֆիզահին եմ,
Զայն կուտամ աշխարհին կոչնակի նման։

## 19. ԲՈՒՊԱՅԻ ԴԻԽԱՆԻ.

Գրաւել է բոլոր անձս, ով սիրուն քու պատկերդ, 1.
Խնդրում եմ, որ միտդ բերես, քու աղաւնի ընկերդ։ 2,

Գիշեր, ցերեկ ես քու սիրուդ համար եղայ խիստ տխուր,
Սրբի, սրտիս սիրականը ձեռքովդ ինձ մի ջուր տուր,
Խնդրում եմ, որ չը մոռանաս, սիրովդ լինիս ամուր,
Իմ վիրաւորած մարմինիս, մի տար սիրոյ սուսերդ։

Էջ որ քու խեղճ Ֆիզահիդ եմ, մնացի առանց ուսում,
Իմ սրտիս վիշտն ու ցաւերը, քեզանից ի զատ խոսեմ ումն։
Ահա ես սոխակ եմ դառել, միշտ Վարդուհի եմ կարդում,
Ճանապարհս լուսաւոր է, վառէ պայծառ լապտերդ,

1—2 Ամենայն տանց վերջումը կլինել յիշեալ տողերը։



## 20. ԻՄ ՎԻՃԱԿԸ.

Զատ խղճալի, նեղ վիճակի մնացի,
Ցաւս հազար, դու նկատէ անթիւ է,
Բժիշկներին տեսայ, ցաւալով լացի,
Ասին ցաւդ իսկ երկաթէ անիւ է։

Այս ցաւովը ողջ մարմինս մաշուեցաւ,
Երակներուս արիւնը քաշուեցաւ,
Ցաւի սաստկութիւնից կեանքս խաշվեցաւ,
Ծակեց սիրտս, այս մախմաթ է, արծիւ է։

Ֆիզահի, պատասխան պէտք է տաս մեղքիդ,
Մեղաց մէջ մի ձգիր խղճալի հոգիդ,
Ցուր աղքատաց բոլոր արծաթդ ու ոսկիդ,
Գերեզմանը ոչ արծաթ է ոչ թիւ է։

## 21. ԴՈՒԳԷԻԴ.

Քայլդ մանրիկ, դու գեղեցիկ,
Վարքդ մարդուք է սիրական,
Չեմ տեսած քեզ նման աղջիկ,
Եղեմական բոյս հոգի ջան։

Քեզ համար խելագարուայ ես,
Սիրոյդ կրակով վառուայ ես,

Առանց քեզի աւերուայ ես,
Դու իմ ասպար ու պահապան։

Սիրոյդ համար եղայ գերի,
Փափաքս մի թողուր թերի.
Կեանքս՝ կրակովդ կերի,
Խոստացիր սէր ինձ յաւիտեան։

Դուն Ֆիզահուն լեր ցաւակից։
Գեղեցիկ ես բովանդակից,
Հոտդ քաղցր է մանուշակից,
Ով ծաղկով լեցուն վարդարան։

## 22. ՀԱՐՈՒՏՈՄՆ.

Ինչու ես յուսացեր, ով մարդ քու զանձիդ,
Չը գիտես, ստեղծող թագաւոր ունիս,
Սատանի չապիկը հագել ես անձիդ,
Դիտցիր որ անաչառ դատաւոր ունիս։

Քեզ նման շատ մարդիկ փողին յուսացին,
Վերջը դառն աղքատ ու խեղճ մնացին,
Անձին վայ կարդալով—զղջալով լացին,
Մտածէ, գործդ տեսանող Լուսաւոր ունիս,

Աշխարհի կայքերը հողին կը մնայ,
Մօրիցը ծնուողը պէտք է մահանայ,
Մարդ Արարչի ձեռքէն ուր պիտի գնայ,
Ֆիզահի, հողի սուրը, թեաւոր ունիս։



## 23. ԲԱՐԵԿԱՄ.

Բարեկամ, ես այսօր քեզի տամ բարև,
Որ մշտապէս մենք իրարու ճանաչենք,
Քու գործերդ թող փայլին իբրև արև,
Որ մենք դալար վարդենու պէս կանաչենք.

Միմեանց մենք, պէտք է բարի կամենանք,
Իրար բարեաց համար, պէտք է մահանանք,
Գործով մենք կատարենք, ոչ թէ լոկ խօսանք,
Եւ սրտով իրարու հեռուից կանչենք։

Խեղճ Ֆիզահն եմ, սիրտս լցուած է վէրքով,
Ես անշնորհք, բարեկամքս շնորհքով,
Իմ մարմինս ու հոգիս շաղուած է մեղքով,
Ոչ մէկս էլ աշխարհում մնալու բան չենք։

## 24. ՍԻՐՏ.

Բա՜ւ է մնաս տրտում տխուր,
Զօրացիր սիրտ, զօրացիր սիրտ,
Խորհուրդդ արա արագ աղբիւր,
Նորացիր սիրտ, նորացիր սիրտ։

Աշխատէ նորից ճարես կեանք,
Որ քեզ համար չը դայ վտանգ,

Մեր բաղդիցը ում գանգատ տանք,
Խորացիր սիրտ, խորացիր սիրտ։

Օրհնէ միշտ քու բարեկամին,
Փրկչիդ փառք տուր ամեն ժամին,
Երբ որ դէմդ ելնի թշնամին,
Քարացիր սիրտ, քարացիր սիրտ։

Եռանդ ճարէ քեզի հաստատ,
Որ չը մնաս դու միշտ աղքատ,
Մի լինիր երբէք յուսահատ,
Խեղճ Ֆիղահուն, ուրացիր սիրտ։

## 25. ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԻՑ.

Իմ անիրաւ բաղդէս ում դնամ գանգատ,
Սրտիս ծաղիկներու վերայ ձիւն բերեց,
Ամբողջ խելքս ու միտքս արաւ անհաստատ,
Մտածելով մտքիս վերայ քուն բերեց։

Ի՞նչ պատճառով բաղդս ինձ հետ ներհակ է,
Իւր ձեռքի գաւաթը մահու բաժակ է,
Նրա տուած ցաւը մի սուր սլաք է,
Աչքիս արտասուքի տեղն, արիւն բերեց։

Իմ բաղդիս սեաւ նամակները ընթերցան,
Կարդալուց յետ, ինձի իսպառ մոռացան,
Բոլոր ցաւս, թշնամիքս իմացան,
Խեղճ Ֆիղահուս, նա մի վատ անուն բերեց։



## 26. ԲԻԱԳՈՒՍՈՒԼԻ.

Անիրաւ բաղդ, ինչու ինձ մօտ չես գալիս,
Մնացել եմ խեղճ ու ստոր վիճակի,
Թշուառ աղքատներուն էրնէկ եմ տալիս,
Հասուցիր օրերս վատ ժամանակի։

Մանկութեան օրերս անցուցի ի զուր,
Ամենից լաւ օրս է տրտում ու տխուր,
Քու ձեռքիցդ մէկ ցաւս եղել է հարիւր,
Մնացել եմ քաղցած, կարօտ կամակի։

Բաւական է ինձի թողնես մոլորուած,
Որ միշտ ման գամ ոտաբոբիկ, գլխաբաց,
Ցաւալի Ֆիղահն եմ աչքերս են թաց,
Մի մատնիր իմ անձս դու վառ կրակի։

## 27. ԹԱՒՐԷԶԻ.

Սիրական սիրովդ խելագար դառայ,
Դու ափսոսա երիտասարդ հասակիս,
Մանուկ հասակովս եղայ քեզ ծառայ,
Գոնէ ափսոսա դու իմ նպատակիս։

Ընչում է սրտիս մէջ սիրոյդ անիւը,
Չը կայ երբէք, սուսեր սիրոյդ հաշիւը,

Տպեցիր սրտիս մէջ ցաւերուդ թիւը,
Սիրով յաղթող եղար իմ ժամանակիս։

Թորգոմեան աղջիկն ես, ինքդ անդրանիկ,
Քու կամառ ունքերդ, ինձ վառեց աղջիկ,
Քայլերդ կաքաւի է, իսկ դու աղունիկ,
Խնդրեմ լուր տաս Ֆիզահ—երգիչ սոխակիս։

## 28. ԴԱՆԴԱՏԻՐԱՆՉԻՑ.

Չի ճարուի աշխարհում ինձ պէս խելագար,
Իմ խելքիս ձեռքիցը, օտար եմ դառել,
Տերևներս թափուած, եղել եմ չոր ծառ,
Այլոց համար ես մի նօտար եմ դառել։

Իմ ցաւիս բժիշկը ինձի չփրկեց,
Խրատեց, համոզեց, օտար տեղ դրկեց,
Ցաւը իմ մարմինս գոյն զգոյն ներկեց,
Ես մի մարդ եմ, ցաւով հաղար եմ դառել։

Այսպէս էր կամեցել իմ Տէր—Փրկիչս,
Այնպէս էլ կրակուած գրեց գրիչս,
Ցաւով լցուած—տկար Ֆիզահ երգիչս,
Լուծս կոտրած, անպէտք նժար եմ դառել։



## 29. ՂՕՉՄԱՅ.

Զուր անցուցի իմ երջանիկ օրերս,
Այսօր, այսօր,—վաղը ասելով,
Դատարկ մնաց իմ գետնափոր հորերս,
Երկարածամ կնոջ խաղը լսելով։

Մարդս պէտք չէ իրա անձից գանգատէ։
Երեսը առ Աստուած պէտք է հաստատէ,
Առանց ձանձրանալու պէտք է աշխատէ,
Երեսը չոր քարին, հողին քսելով։

Ո՞վ եկաւ աշխարհը, վերջը գոհ գնաց։
Դառնաշխատ Ֆիզահն եմ փորս միշտ քաղցած,
Երգիչներն էլ ինձի նման առանց հաց,
Մեռան,—«Աստուած ողորմած է» ասելով։

## 30. ՀԻՃՐԱՆ—ՔԵԱՐԱՄԻ.

Բացուելու ես, իբրև ծաղիկ սիրուհի,
Ցոյց տուր ինձի անշամանդաղ պատկերդ,
Ամենայն շնորհքով լի ես տիրուհի,
Ցոյց տուր ինձի գեղածիծաղ պատկերդ,

Կատարեալ վարմունքով, սէր ու յոյս ունիս,
Անուշահոտ, գեղեցկադէմ բոյս ունիս,

Ամեն կողմից քաղցը խրախոյս ունիս,
Բաց մէկ տեսնեմ լուսաշաղախ պատկերդ։

Ֆիզահի երգիչս այսքանը կասէ,
Խնամք արա ինձի, խօսքերս լսէ,
Խորհուրդիս հետևիր, եկ, ինձ հետ խօսէ,
Որ չը լինի շատերին խաղ պատկերդ։

## 31. Ծ Ա Ղ Կ Ա Զ Ա Ր Դ Ի Ե Ր Գ.

Պատրաստէք ձեր չըխ-չըխ, կարկաչանները.
Ցղմէք պատրաստ կեցիք Ծաղկազարդն եկաւ,
Ուսերուդ գցեցէք ձեր կապարճները,
Ձեզի ձրի հատիկ տուող մարդն եկաւ,

Եկէք չնորհաւորենք Փրկչի ամիսը.
Խնդրենք, որ շուտով գայ առատ յունիսը,
Արթնացիր խեղճ սոխակ մերձ է մայիսը,
Քո սիրահարը—կարմրակոկոն վարդն եկաւ։

Այս եկողն է մեզի բազում լոյս տուող,
Սուրբ Հոգի պարգևիչ, աչքի լոյս տուող,
Մեզի է Արարիչ, խրախոյս տուող,
Ֆիզահու ջանքերի միակ զարդն եկաւ։



## 23. Դ Ո Ի Բ Է Ի Դ.

Վիճակէդ գոհացիր ով մարդ,
Քանի որ Ցէը Ցիսուս ունիս,
Քու անձդ մի դնիր թակարդ,
Երկնային խրախոյս ունիս։

Քու վիճակէդ դու գոհացիր.
Երկնից պատուէրի մէջ կեցիր,
Բոլոր սուրբ գրքերն ընթերցիր,
Մինչդեռ սաղ աչքի լոյս ունիս։

Սուրբ գրքի խօսքն է թանկագին,
Ձարից կըփրկէ մեր հոգին,
Մի՛ սիրիր արծաթն ու ոսկին,
Թէ հոգի սրբալոյս ունիս։

Մեզ աշխարհը չի տայ պարգև,
Մարդս ծառ է, առանց տերև,
Ֆիզահ, աչքէդ թափէ անձրև,
Եթէ եռանդ ու յոյս ունիս։

## 33. Ս Ե Մ Ա Յ Ի.

Ճշմարիտ, սուրբ եղիր ով սիրտ, քեզ երկնային ուսուցիչ կայ,
Իրան Սուրբ Հոգիով գրուած Աւետարան խրատիչ կայ,

Բոլոր բարի քու գործերդ կըգրուի թուղթ ու գրիչ կայ,
Տիեզեր աշխարհին իշխան, մեր հոգւոյն լոյս պարգևիչ կայ,

Թէ որ գոցուած լինինք, ով սիրտ, մեզ բանալի հասուցիչ կայ, 1.
Ցաւի կամ կրակի ձեռքից, յայտնապէս մեզ Փրկիչ կայ։ 2

Այն Փրկչին յուսալու է, որ լոյս է Նորա հագուստը,
Նա է կապուած մեղքի արձակում տուող, գտնող կորուստը,
Միւս անգամ նա գալու է, բայց յայտնի չէ իւր գալուստը,
Բոլոր աշխարհի հզօրն է, ամեն արքայից հարուստը։

Աստուած մեր սուրբ սիրոյ համար միակ Որդին աշխարհ դրկեց.
Եկաւ Միածին Յիսուսը ձեռքերովը մեզի գրկեց,
Աստուածային սուրբ արիւնով յայտնապէս Գողգոթան ներկեց,
Ու մահացու դժոխք գնաց, Ադամայ հոգին Նա փրկեց։

Հանապազ մեր հոգւոյն լոյս պարգևողին համար լալու ենք,
Մենք բոլորս Նորա սիրոյն գիշեր ցերեկ ման գալու ենք,

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը.



Մեր վատ գործոց համար, գիտես, հաշիւ ու համար տալու ենք,
Անարժան Փիզահս կասեմ, մեր արածը զգալու ենք։

## 34. ՄԻԽԷՄՄԷՋ.

Սիրական, քու սիրովդ խելագարուած եմ, սիրական,
Քու սիրոյդ նետերովը, վիրաւորուած եմ, հոգի ջան։
Անմահական լոյս պատկերդ կարծես թէ լինի ծիածան.

Քու ծամերդ ոսկէթել է, գլուխդ ոքրան դովական,
Տէրը քեզ պարգևել է գեղեցկութիւն արքայական,
Խղճալոյս՝ տեսութեանդ միանգամայն արա՛ արժան։

Գիտեմ որ պատկեր ունիս արեգակից գեղածիծաղ,
Եւ աղեղնակ ունքերդ է, լուսնեակից անշամանդաղ,
Երկնային ջահ աչքերդ, արուսեակից լուսաշաղախ,
Բնութիւնդ խոհեմ է, դուն ես հրեշտակից խաղաղ,
Լեզուդ մեղրից անուշ է, թող կեանքս լինի քեզ մատաղ,

Բաղէի սուր աչքերով, ընթերցիր սաղմոս, շարական,

Մի խնայիր, սիրելիս, ինձ դրկէ սիրոյ նամակդ,
Նրանով ինձ հասկացուր, թէ ինչպէս է քու վիճակդ,
Կատարեալ հոգւով զրէ ինձի քու սիրոյ մուրհակդ,
Գիտես որ սիրոյդ համար եղել եմ անբաղդ սոխակդ,

Կամ թէ քեզ ցնծում բերող դեղեցկափետուր թռ-
թակդ,
Ուրեմն, ես թռչուն եմ, դուն եղիր ինձի վարդարան։

Լոյս երեսիդ յարաժամ, ծորաւ եմ կենաց ջրի պէս,
Անուշահամ խօսքերդ, խմելիում է սիրտս սրի պէս,
Նազելով քու մանգալդ, այրում է ինձի հրի պէս,
Դէպի քեզ նայող մարդը, իսկ սեանում է մրի պէս,
Գիզահի երգչիս մօտ, նման ես սպիտակ կրի պէս,
Թէ որ ինձ չես համաձայն, համեցէք գնանք գա-
տարան։

## 35. Ն Ա Ք Ա Ր Ա Տ – Գ Ի Ի Ա Ն Ի.

Մի սիրելի ունէի, ձեռքէս արագ թռաւ գնաց,
Սրտիս ուրախութիւնը, բոլորովին առաւ գնաց,
Շատ փափագ էր աշխարհին, միայն սրտով ծարաւ
գնաց,
Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։

Իմ սիրելիս ինձ համար, պտղաբեր էր մի ծառի պէս,
Բարոյական խօսքեր ունէր, հոգանիւթ անտառի պէս,
Ընութիւնով շատ ազնիւ էր, վարքով անմեղ գառի
պէս,
Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։



Իմ ծնողս ինձ համար բարեխնամ էր մշտական,
Իմ ճիւղիս արմատն էր, բոլորովին ինձ պատուական,
Խեղճ Գիզահուս մոռացաւ, լոյս տուն գտաւ տէ-
բունական։

Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։

## 36. Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ.

Աշխարհին եղիր պատուական,
Որ քեզ ասեն մարդ բանական,
Թշնամիք ցաւերդ իմացան,
Վէրքդ արին հարիւր հողագործ։

Քու թշնամիքդ շունին վարք,
Քեզ հետ միշտ խօսում են անկարգ,
Դատարկ կուժդ լիք փարշին զարկ,
Ուժովդ ամուր, հողագործ։

Մի քնիր, գործդ կատարէ,
Որ քեզ չասեն թէ անճար է,
Ունեցած դոշտերդ վարէ,
Թոռներուդ ձայն տուր, հողագործ։

Միշտ դու գործիդ արի կեցի։
Միտ առ, քեզ այսքան գովեցի,
Շատ պահէ հաց, ոչխար ու ձի,
Ձեռքդ առ թակ, դուր, հողագործ,

Խրատ արա՝ ականջիդ օղ,
Ասուած է հաբազատ ծնող,
Ֆիզահն եմ այլոց խրատող,
Վարքով տխուր, հոդազործ։

## 37. ՂԷԼԷՆՏԷՐԻ.

Ինձ մոռացել է սրտովը ազնիւ սիրականս,
Երբ կամի կանչ ինձի հետ կռիւ սիրականս,
Հնուց մնացած բարիքները թողեց ու գնաց,
Սրանից յետ պահանջում է հաշիւ սիրականս։

Կեանքս որ նուիրեմ սիրոյն համար քիչ է ամեն ժամ,
Կուտայ սիրովը ինձի միշտ պատիւ սիրական,
Թէ որ սլանայ, երկնքի գաւառը կը հասնի,
Այսպէս չնորհաց թռչուն է — արծիւ սիրականս։

Խելագարի պէս զօր ու գիշեր քեզի եմ կանչում,
Ֆիզահուս սրտի մէջ շրջող անիւ սիրականս։

## 38. ԽՕՍՔ ԱՌ ԱՀԱԿԵՐՏՆ.

Սիրելի Ֆահրատ աշակերտ,
Երգէ մենաստանին համար,
Աշխատէ չը մնաս անկիրթ,
Պէտք գաս դատարանին համար։



Վարպետիդ խրատը լսէ,
Ֆիտցածդ պարզը խօսէ,
Բարոյական երգ սկսէ,
Ուրախ հարսնարանին համար։

Սիրովդ եղիր տիրասէր։
Որ չը լինիս մարած լապտեր,
Քեզ ճարէ մի խոհեմ ընկեր,
Ազնիւ աստիճանին համար։

Քու բարիդ, չարդ ճանաչէ,
Արմատիդ վերայ կանչէ,
Աղօթքով Տիրոջը կանչէ,
Հոգուդ սրբարանին համար։

Շատ մի լինիր խեղճ ու անճար,
Ունեցիր բնական հանճար,
Լեր պարզախօս, լեզուով ճարտար,
Անբաղդ գերդաստանին համար։

Աշխատէ ճարես լաւ վիճակ,
Սովրէ ածել տաւիղ, ջութակ,
Երգ յօրինէ քեզ յիշատակ,
Պէտք գան երգարանին համար։

Աշխարհում պահէ թանգ անուն,
Ծուրբ հոգւով եղիր գուարթուն,
Եթէ ունիս մտքուը արիւն,
Թափէ պատուականին համար։

ТИФЛИСКАГО СОБОРА

Բարի սիրտ ճարէ քեզ հաստատ։
Եղիր սուրբ գրքին համեմատ,
Քեզանից փոքրին տուր խրատ,
Անմահ պատուիրանին համար։

Մի լինիր չոր անտառի պէս,
Եղիր դու մաքուր գառի պէս,
Բոյս տուր պտղաբեր ծառի պէս,
Հոգուդ բուրաստանին համար։

Հեռացուր քեզնից չարութիւն,
Ունեցիր դու միշտ բարութիւն։
Տուր աղքատաց ողորմութիւն,
Ընձիդ գանձարանին համար։

Լեր դու առատաձեռն միշտ,
Որ չը պատէ քեզ ցաւ ու վիշտ,
Սուտ գործին մի վկայիր ճիշտ,
Վատ ընկերի բանին համար։

Լսէ քու վարպետ Փիղահուդ,
Մեզ աշխարհից չը կայ օգուտ,
Բոլոր ջանքերս են անօգուտ,
Սառը գերեզմանին համար։

## 39. ՈԻՆԱՅՆ ԱՉԽԱՐՀ.

Ցարաժամ մարդկանց մահը, օրինակ է աշխարհին,
Մարդուս մահն ու ծնունդը, չարունակ է աշխարհին։



Աւելի գանձ սիրողը, միշտ փափագ է աշխարհին,
Վայ, այն մարդին այս դարիս, որ մենակ է աշխարհին,
Ծով ու ցամաք ստեղծողն, հեղինակ է աշխարհին։

Ունայն աշխարհ շատերին, դու ցաւի տուն կըտանես,
Ընկղմած են դուրերդ. ինձ պէս մարդ քանիս, քանիս,
Թէ որ հմուտ բժիշկ ես, արի օգնէ իմ ցաւիս.
Ստիճանս փոքրիկ է, գոնէ խղճա համբաւիս,
Մարդուս բարի անունը, աշտանակ է աշխարհին:

Երբէք մի մարդ չը գտայ, որ ապրէր լիակատար,
Սողոմոնին, Սամսոնին, կլանեցիր սուտ աշխարհ,
Եւային, Ադամին էլ, ցաւով թողիր անդադար,
Իմ արեանս էլ ծարաւ ես, երբ որ կուզես՝ արի տար,
Մարդիս վերջի հանդերձը, սպիտակ է աշխարհին։

Մի մարդ երբէք չունի քու մէջը իւր տուն սեպհական,
Հարուստ, աղքատ չըգիտես, կանես ուղիղ դատաստան,
Զատ սոխակներ մունջ թողիր, կացան առանց վարդարան,
Այդ մասին խեղճ Փիզահը, երգեց—բաց արաւ բերան,
Հաշուեց, նոր լաւ անունը, արեգակ է աշխարհի։

## 40. ԽԱԺԻԿ—ՄԱԺԻԿ ԱՉԵՐ.

Քու սիրովդ միշտ վառվում եմ անուշիկ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր,
Դէմքդ սիրուն և խօսքերդ քնքուշիկ,

Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Գատկեր ունիս, սիրուն, իսկ գեղաժիծաղ,
Աչքերդ ու ունքերդդ է անշամանդաղ։
Սիրականս, ես քեզի եմ միշտ մատաղ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձի էլ քեզի պէս արիր։

Սիրոյդ համար ես մի բողբոջ կանանչ եմ,
Սոխակի պէս, վարդ նաղելի կը կանչեմ,
Դէմդդ տեսած ժամանակին կամաչեմ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Մի կորցնիր այդ քու թանգ ժամանակդ,
Քանի որ փոքր է, սիրուն հասակդ։
Մի թօթափիր աչքերիցդ վտակդ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Ոսկէթել մազերուդ, սանտր է հարկաւոր։
Ականջիդ գինդերը, մանտր է հարկաւոր,
Ֆիզանն եմ, սիրուհիս ծանտր է հարկաւոր,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։



## 41. ՄԻԽԱՆԴԴԷՍ—ԴԻԻԱՆԻ.

Ինձի մոլորուած թռղեց, ազնիւ սիրականս գնաց,
Վերբերուս սպեղանի դնող հոգի-ջանս գնաց,
Մի նորատունկ ծառ էի, սիրող պահապանս գնաց,
Ինձ թշնամուց ազատող, ասպարը ու վահանս գնաց,

Վերջապէս խեղճ թողնելով ինձի, այգեպանս գնաց, 1.
Ո՞ւր փնտռեմ, որ գտանեմ, հոտով բուրաստանս գնաց։ 2.

Ընդդաղար գիշեր-ցերեկ, արիւն կուլամ դառիս համար,
Ջրերն այժմ պատրաստ են, այն պտղաբեր ծառիս համար,
Թանձրացած մի շուք իջաւ, ծաղկալի անտառիս համար,
Երկնային աշխարհիցը, արև եկաւ սառիս համար։

Ինձանից բաժանուելով, շուտ գնաց ընկերի քովը,
Գնաց իրան սիրելի, այն լոյս պատկերի քովը,
Ջտապօք վազեց գնաց, իրան սիրող սէրի քովը,
Որ կամենայ կը տանի Ֆիզահուն էլ վերի քովը։

## 42. ԳԻՐԵԱՆԻ.

Ով սիրտ, եթէ որ վատ լինիս կը դատեմ։
Գիտցիր որ քեզ համար դատաւոր եմ ես,

---

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը։

Տգէտներուն ես միշտ պէտք է խրատեմ,
Ըստորում օրէնքին, պարտաւոր եմ ես,

Բարի խրատն արա քու ականջիդ օղ,
Եղիր սուրբ խորհրդով, այլոց խրատող,
Խեղճերու ցաւերին լեր դու փարատող,
Մարդկանց մէջը տխուր—սեաւոր եմ ես։

Խեղճ Ֆիզան եմ ցաւով լցուած յարաժամ,
Չը խնդացի աշխարհի մէջ մի անգամ,
Մինչև իմաստ պիտի օտար տեղ ման գամ,
Վայրենի գաշտերում, թեաւոր եմ ես։

## 43. ՄԵԾ ՕՒԵՐԳ.

Էս ինչ թավուր քար ջիկար եմ,
Թորկեր եմ զիմ ճրժերն ի չօլ,
Բառատայ խլխին բէկար եմ,
Կը կըտռտեմ, բէուտայ սօլ.

Հերիք մնամ էլու դռներ,
Էրթամ գտնեմ զիմ խեղճ գառներ,
Ջրեմ իմ բօստընի ծառներ,
Ձինեմ ընտոր աղբուր ու գօլ։

Չուր յեր գատեմ ես փորու խաց,
Դան իմ աւտիք մնաց բաց,
Ճրժեր գուլան, տրկներն է թաց,
Ես կու պառկեմ, դօշակս է բօլ։



Սէֆիլ Անօս մնաց լալով,
Մեռաւ խըլխի պարտքեր տալով,
Թըխ ինք մնայ հերուայ շալով,
Կրպէն խաղայ առանց դըհօլ։

## 44. Ք' ԻԻՃԷՏ ՂԷԼԷՆՏԷՐԻ.

Սրի իմ կեանքս,
Լէ՛ իմ ջանքս,
Լեր ինձ սիրական,
Դառն աշխատանքս,
Իմ հանգամանքս,
Սրի հոգի ջան։

Գաղեալ ծառ եմ ես,
Հով անտառ եմ ես.
Լեզուիդ բառ եմ ես
Քեզի գառ եմ ես,
Լեր ինձ պահապան։
Չէ՛, լաւ ծաղիկ եմ,
Սորոյդ մօտիկ եմ.
Քեզ անդրանիկ եմ,
Ես աղաւնիկ եմ,
Բացուիր, վարդարան։

Քեզի փափաղ եմ,
Սիրոյ նամակ եմ,
Ի՞նչ նպատակ եմ,

Վարդիդ սոխակ եմ,
Լեր ինձ պարտիզպան,
Քեզ միշտ կը կանչեմ,
Նաև կանանչ եմ,
Ես Ֆիզահիդ չեմ,
Երբ որ ենջեմ,
Ընդ քեզ յաւիտեան։

## 45. ԳԱՋԷԼ ԴԻՒԱՆԻ.

Չի ճարուի աշխարհումը, վարքով խելագար ինձի պէս,
Ցուն ու տեղից զրկուած, պանդուխտ ու օտար ինձի պէս։
Ոչ ոք չը կայ վիրաւոր, նաև դառն աղքատ խղճալի,
Անտէր ու անտիրական, ցաւալի, տկար ինձի պէս։

Իմ ցաւերս ու վշտերս, աշխարհի մէջը անթիւ է,
Անգլուխ ման եմ գալիս, չը կայ մի նիհար ինձի պէս,
Ճաղդը որ բաժին արաւ, օտար տեղերն ինձի տուեց,
Կայ արդեօք ինձի նման, ընկնող սար ու քար ինձի պէս։

Ասում են թէ ջրտաքը, ջրի ճամբէն է կոտրվում,
Ոչ թէ միայն Ֆիզահը, կը ճարուի հաղար ինձի պէս։



## 46. ԳԱՋԷԼ ԶԷԼԷՆՏԷՐԻ.

Չի լինի խղճալի, մտքովը Փրկիչ ունեցողը։
Իրան սիրոյ հետ, մշտական զրիչ ունեցողը,
Կունենայ ջանք, միշտ սուրբ սէրի հետը քայլելով նա,
Ոչ թէ չափազանց մտքովը կտրիչ ունեցողը։

Ունայն աշխարհը շատ մարդկանց ճամբից կը հանէ,
Աւելի գործից, կարծեմ լաւ է քիչ ունեցողը,
Մարդիս երկրորդ աչքի լոյսն է շնորհքն ու ուսումը,
Մեծ փառք կըստանայ, բերանին կապիչ ունեցողը։

Օդն որ ելանի անուսում մարդը, մարդ չի դառնայ նա,
Ինչպէս Ֆիզահուս նմանակ երգիչ ունեցողը։

## 47. ՏԱՃԿԱԿԱՆ ԶԷՔԻ.

Դու ես կենաց ծաղիկ, սիրելի աղջիկ,
Ինձ համար անդրանիկ սիրական ես դու,
Գնացիր քնքուշիկ, ինքդ աղաւնիկ,
Խօսուածքդ անուշիկ, հոգեհան ես դու։

Խօսքերդ թանկ ակ է, կենաց մուրհակ է,
Այդ ինչ նպատակ է, վատ ժամանակ է,
Երկաղ սպիտակ է, սրտիս սոխակ է,
Այս իմ սոխակ սրտիս, վարդարան ես դու։

Ցանքդ կամար թուր է, թերթիչդ սուր է,
Արտասուքդ աղբուր է, ծովի փրփուր է,
Կաթդ ընտիր – մաքուր է, Ֆիզահը կուր է,
Հոտով քաղցր բուրէ, պահապան ես դու։

## 48. ՄԻԻՍՏԷՋԷՏ.

Արի, սիրելիս ընթերցիր իմ սիրոյ նամակս,
Լսէ նպատակս
Միշտ քեզ զոչելով, թափվում է աչքերից վտակս,
Արի միայնակս։
Սիրոյդ համար միշտ վառվում է գիշեր ցերեկ կեանս,
Արի սիրականս,
Ո՜հ, ինչ պատահեց հեռացար դու իմ սիրականս,
Ա՛խ, իմ հոգեհանս։
Ցերևիդ մասին վառվում է ծառս քեզի համար,
Ճառս քեզի համար,
Անդադար ցաւով մաշվում եմ դառս քեզի համար,
Արի իմ սոխակս։
Գիշեր ու ցերեկ քու սիրովդ չարշարվում եմ ես,
Աննեան հարվում եմ ես։
Հասկացիր, հոգիս, քեզ համար միշտ տկարվում եմ ես,
Ջուտ հասիր քամակս։
Խելագարի պէս փնտռում է քեզ Ֆիզահն ամեն տեղ,
Ով Արամազդի ցեղ,
Վշտոտ ու տկար մնացի, պալարիս հասուր դիպ,
Լեցուր իմ փափագս։



## 49. ՄԻԻՍՏԷՋԷՏ.

Ի՞նչ պէտք է տանի աշխարհից պանդուխտն ու օտարը.
Սրտով է սգաւոր,
Չունի մի խնդում, լաւ վիճակ, տրտում ու տկարը,
Որ լինի թեաւոր։
Թէ սէր ունենայ սրտի մէջ վառ-վառ իրան համար,
Փառ-փառ իրան համար,
Թէ սոխակի պէս կարդան ճառ-ճառ իրան համար,
Չի լինի փառաւոր,
Այդպէս խղճալի մարդիքն են վէրքով լիքը լցուած,
Խղճալի մոլորուած,
Մինչ այդպիսիքը բարոյական ոյժ չեն ստացած,
Փառքից են հեռաւոր։
Գոչէ Ֆիզահի օտարներու հեղինակին միշտ
Հոգի ունեցիր ճիշտ,
Չը լինի թէ ընդունիս վատ անունը ամբարիշտ,
Որ լինիս բաղդաւոր,

## 50. ՄԱՐԱՔԵԱՅ ԴԻԻԱՆԻ.

Ինձ զրաւեց սիրուհի քու լուսոյ փրփուր աչքերդ,
Եդեմական խմելիք է, դրախտի ջուր աչքերդ,
Երբ որ տեսնեմ, կը ցանկանամ, այդ լուսափառ պատ-
կերդ,
Իսկապէս ճանաչողներ կան, եռանդուն հուր աչքերդ։

Յոնքերդ կարծես աղեղ է, աչխարհում չը տեսնուած,
Դէպի մեզ անուշ է նայում, սլաքից սուր աչքերդ,
Քու չեկագոյն ծամերուդ արժան տեսայ անգին քարեր,
Թերթերունքներդ թառամած, էր է տխուր աչքերդ։

Սև աչքերուդ տեսութեանը փափագ է խեղճ Ֆիզահը,
Արտասուքը թող որ թափէ, ինչպէս աղբիւր աչքերդ,

## 51. ԱՌ ՍԻՐԵԼԻՆ.

Սիրականս քեզ համար,
Գիշեր, ցերեկ վառվում եմ,
Դու խորհուրդ տուր ինձ համար,
Չէ՞, ես խելագարվում եմ։

Աչի մօտս անուշիկ,
Խօսքերդ է քնքուշիկ,
Դուն խօսիր ինձ հետ յուշիկ,
Գիտես, որ մոլորվում եմ։

Քեզի մօտս կանչելով,
Շատ վաղ քեզ ճանաչելով,
Դէմքիցդ ամաչելով,
Էոյս պատկերիդ տարվում եմ։

Ես վարդ եմ, դու՝ ինձ սոխակ,
Միշտ քու. սիրոյդ եմ փափագ,
Խեղճ Ֆիզահիս միայնակ,
Կանգնած դէմդ լռվում եմ։



## 52. «Ծ Ա Ն Տ Ր Կ Ե Ց Ի Ր Սաղ Ի Տ Ը Գ Ա Մ».

Աչքով նայէ միշտ հողին,
Քեզ իբրև մարդ ծնողին,
Չափաւոր խմէ օղին,
«Ծանտը կեցիր լիտը դաս.

Սա օղի է թան չէ, 1.
Ամեն խմողի բան չէ։ 2.

Զուր մի անցընէր օրերդ,
Միտդ բեր Տէր հոգորդ,
Գիշեր մի շինիր զօրդ,
«Ծանտը կեցիր լիտը դաս»։

Նպիր դու մարդ բանական։
Քեզ խելք ճարէ բնական,
Դորժիդ նայէ տնական,
«Ծանտը կեցիր լիտը դաս»։

Թանգ պահէ քու անունդ,
Մի երկարեր կանգունդ,
Հուտ կաւերես քու տունդ,
«Ծանտը կեցիր լիտը դաս»։

Մի կորցընիր վիճակդ.
Լաւ պահէ ժամանակդ,

---

1—2 Ամենայն սանց վերջումը կրկնել յիշեալ տողերը.

Փոքը չէ քու հասակդ,
«Ծանտը կեցիը լիտը գաս»։

Տանդ կայքը ծախեցիը,
Ձեռքդ փայտին մխեցիը,
Ֆիզահի զգոյշ կեցիը,
«Ծանտը կեցիը լիտը գաս»։

## 53. ՄԻԻԽԷՄՄԷԶ.

Վէրքս փարատող չըգտայ, մնացի խաւար, մնացի,
Գանգատս դատող չը գտայ, մնացի անճար մնացի,
Բժիշկ խրատող չը գտայ մնացի տկար, մնացի.
Ինձի դաս տուող չը գտայ, մնացի տկար մնացի։
Գեղեցիկ Յովսէփի պէս մնացի անհայր, մնացի,
Խղճալի ոբբերու պէս. մնացի անմայր, մնացի,

Անարգ թշնամու խօսքերը, մէկ անդամից ծակեց սիրտս,
Անունիս արատ բերաւ, վարագուրով ծակեց սիրտս,
Վայրախօս համբաւներով, զուր տեղը մտրակեց սիրտս,
Բաղդն էլ մէկ կողմից հազար ցաւով պատեց սիրտս.
Այնուհետև ողջ կեանքումս երբէք չը խստակեց սիրտս,
Մոլորուած ոչխարի պէս մնացի շուար մնացի։

Իմ սխալս ուղղելով Տէրը վերաս անձրև բերեց,
Նոր ծաղկած ծառի նման կեանքիս բողբոջ տերև բերեց,
Ուժերս նորոգելու կարմիը—փայլուն արև բերեց,



Աշխարհի մէջ թռչելու թռչունի նման թև բերեց,
Բայց բաղդը նախանձելով արևիս մութ ու սև բերեց,
Մինչ ի մահ բաղդի ձեռքին մնացի աւար մնացի։

Թող մշտապէս օրհնեալ լինի, Արարչիս բարի կամքը։
Որ հայրաբար տարածէ միշտ, ինձ վերայ իւր խնամքը,
Երանի, մարդուս լինին, թշնամի իւր բարեկամքը,
Ստուած անպակաս անէ, մեր միջից բարի անդամքը,
Ֆիզահիս խնդրում է որ, հեռու դնան չարակամքը,
Ըստորում աղքատ ու խեղճ, մնացի դաղար մնացի։

## 54. ԳԱԶԷԼ ՍԷՄՄԱՅԻ.

Անձս վառուեց կրակի պէս, բժիշկ, ինձի պատասխան տուր,
Վառուեց կեանքս կրակի պէս, այս բողոքիս դատաստան տուր,
Քաղեց ողջ անդամներիս մէջ, եղած կեանքս մի մաղի պէս,
Չկայ ազատուելու հնար, իմ ցաւիս դեղ ու դարման տուր։

Զօր ու գիշեր մութ մնալով, մեղքիս ձեռքից կը տանջուիմ,
Մեղքս թօթափելու համար, տար մի լեռ տեղ քաւարան տուր,
Սաստիկ կրշարշարէ անձս, այս ցաւն ինձի դաղան եղաւ.
Խելագար եղայ ձեռքիցը, դու իմ անձիս պահապան տուր։

Ծնունդ ունեցողը պէտք է, մահանայ՝ աշխարհից գնայ,
Բողոքող Ֆիղահուս անձի համար մի լայն գերեզման տուր։

## 55. ՍԷԼԻՍ—ԳԱԶԷԼ.

Ունենամ աշխարհի մէջ ես, բարի վիճակ ունենամ,
Տէրոջը Սուրբը շնորհքով, երգեր յիշատակ ունենամ,
Անցաւոր աշխարհի մէջ, մարդը ինչ է, որ պարծենայ,
Դէպի երկինք գնալու, բարի նպատակ ունենամ։

Վերջապէս այս աշխարհը մեզ սեփական տուն չիլինի,
Հանդերձեալ կեանքի համար, պէտք է ես կտակ ունենամ,
Երկնային բոլոր լոյսը, չէ աշխարհին արևի պէս,
Իմաստուն կուսանաց պէս, ձեռքիս վառ ճրագ ունենամ։

Մարդու ընտիր աղօթքը, ես երկնքին սիւն եմ անում,
Ֆիղահին եմ Արարչէս, սուրբ սիրոյ տոմսակ ունենամ։

## 56. ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ

Թէ սիրելուս մօտ կերթաս, սիրոյ նամակս առ գնայ,
Աչքերէս անձրևի պէս՝ թափած վտակս առ գնայ,
Իրան տուած սուրբը սէրը, կ'խայթէ սիրտս մշտական,
Ինչ սիրով որ սիրել եմ, իմ նպատակս առ գնայ։



Տեսնում ես, որ նորանից, այսքան սուրբ սէր պահանջում եմ,
Ուրեմն շատապէ շուտ, սիրոյ մուրհակս առ գնայ,
Ինձանից բարև տար, թէ պա տգդ մօռցար պատուական,
Թիթեռի պէս վառվում եմ, այրող կրակս առ գնայ,

Ֆիղահուս չնչին ընծան, տար, մօտեցուր սիրեկանիս,
Կարկաչող քաղցր երգող, նախշուն թութակս առ գնայ,

## 57. ԵՐԴ ԾՆՆԴԵԱՆ.

Ամեն տարի այսօր հասնիք,
Ձեզ շնաւոր ծնունդ լինի,
Իբր հոտաւէտ ծաղիկ բուսնիք,
Ձեզ փառաւոր ծնունդ լինի։

Աստուած տայ ձեզ աջողութիւն,
Բարով հասնիք սուրբ Յարութիւն,
Ունենաք վեհ արտօնութիւն,
Ձեզ լուսաւոր ծնունդ լինի,

Սուրբ դրախտին անտառ լինիք,
Պտղաբեր կենաց ծառ լինիք,
Փրկչին հարազատ գառ լինիք,
Ձեզ զօրաւոր ծնունդ լինի։

Փիզահն է ձեզ հասատ ընկեր,
Սուրբ սիրով կեանք վարէք աղատ,
Որդիքիդ լինին հարազատ,
Ձեզ բաղդաւոր ծնունդ լինի։

## 58. ԹՕՓԽԱՆԱՑ ԴԻՒԱՆԻ.

Սիրովդ տոչորվում եմ, աղունիկս ինձ մօտ արի,
Ձէ որ ինձ չարչարում եմ, անուշիկս ինձ մօտ արի,
Այսքան ամ է թողել ես տրտում, ցաւալի ինձի դու,
Որտեղ լինիս, քեզ կը գոչեմ, անդրանիկս ինձ մօտ անի,
Բաւ է մնամ խղճալի, գոչում եմ ճանապարհդ սպասելով,
Գովելի անուան տէր ես. երջանիկս ինձ մօտ արի,
Վառվում եմ ու էրվում եմ, բաւ է ինձ տանջես ով սիրուն,
Մամիկոնեան ցեղիցն եմ, Ջուշանիկս ինձ մօտ արի,
Թէպէտ քեզ պէս սիրուններ ես շատ կ'ճարեմ ինձ համար,
Ես Փիզահի երդիչն եմ զեղեցիկս ինձ մօտ արի։

## 59. ԻՄ ՋՈՒԹԱԿԻՆ.

Մայրդ վայտ է, հայրդ սղոց ու ուրագ,
Վրայիդ լարերն է հատ, հատ, հատ միջակ ու բարակ,



Ստուած տացցէ քեզի ուրախ ժամանակ,
Խօսիր, սիրուն ջութակ, խօսիր, խօսիր, խօսիր թութակի նման, 1.
Ձայնդ քաղցր հանիր, հանիր, հանիր սոխակի նման։ 2

Քաշիչդ որ չլի, դու հէչ ձայն չունիս,
Էլ ինչ ուրախութիւն խղճուկ տկարիս,
Երբ ձայնդ դուրս եկաւ, այն օրն է մայիս,
Խօսիր, սիրուն ջութակ.... են....

Մանկութենէ դու ինձի եղար պարտական,
Իմ տեղակս քեզի տարան դատարան,
Տաւիղն եղաւ իսկ քու անձիդ պահապան,
Խօսիր, սիրուն ջութակ.... են....

Առանց քեզի ես մի ուրախ օր չունիմ,
Դիտեցիր որ գիշեր, ցերեկ, զօր չունիմ,
Քեզ այսքան սիրելով, ոչինչ նոր չունիմ,
Խօսիր, սիրուն ջութակ.... են....

Ստուած տայ աշխարհին միշտ ուրախութիւն,
Որ ես ու դու ղտնենք լաւ աջողութիւն։
Փիզահրս առանց քեզ չունի զօրութիւն,
Խօսիր, սիրուն ջութակ.... են....

---

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողեր.

## 60. ԶԷԼԷՆԴԷՐԻ ՄԻԽՍԷՄՄԷԶ.

Ո՞ւր ես, սիրելիս, փնտրում եմ ես քեզի յարաժամ.
Թէ ինձ կը սիրես, ճշմարիտ սէր բանցուր միանգամ,
Քեզ պէս սիրունին զաղտնի կերպով պէտք է խոր-
հուրդ տամ,
Բաւ է՝ սիրելիս, տանջուիմ—սիրոյդ հետը ման գամ,
Ղրկած նամակդ ձեռքս առնելով՝ կարդամ ու միշտ
լամ, 1-
Սիրոյդ պայմանին սպասում եմ անդադար ամէ
ամ, 2,

Խիստ վատ աւուր մէջ դու լժողիր, հասիր սիրեկանս,
Հոգիս ինձնից բաժանեցիր, կարմիր սիրականս,
Խաղաղ սրտիս մէջ դու կրակ ձգիր սիրականս,
Անպաշտպան եմ ես, արի ինձ դտիր սիրեկանս։

Առանց քեզի աշխարհի մէջ զուր եմ մնացել ես,
Քաջ սէրդ քաշելով, արդեօք ո՞ւր եմ մնացել ես,
Ալեկոծ ծովի նման կապոյտ ջուր եմ մնացել ես,
Ե՛կ օգնեա՛ ինձ. մտքովս կուր եմ մնացել ես.....,

Սիրովդը տառապում եմ, դու մէկ յոյս տուր ինձի,
Անձս չորացաւ, սիրելիս, դու մէկ լոյս տուր ինձի,
Աշխարհի մէջ դու մէկ ընտիր, հոգի-կոյս տուր ինձի,
Խաւար մտացս դու մէկ երկնային լոյս տուր ինձի...։

---

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել յիշեալ տողերը։



Այսքան խնդրում է Փիլոնը, եռանդ նուիրէ ինձ,
Աղաչում եմ, ով սիրուհիս, տաղանդ նուիրէ ինձ,
Ինչ պարգև որ ինձ տալու ես դու անդ նուիրէ ինձ,
Վերջի վախճանիս մի անմահ աւանդ նուիրէ ինձ...։

## 61. ՍՕԽԱԿ.

Առաւօտուայ արշալուսին,
Երգում եմ անուշիկ սոխակ,
Կարմիր վարդն է քոյ ամուսին,
Դու խօսէ, քնքուշիկ սոխակ։

Դու վարդի սիրոյն ես տարուած,
Նորա համար ես մոլորուած,
Ինչո՞ւ ես այդքան գրաւված,
Երբ չունիս նմուշիկ սոխակ։

Վարդի բացուելուն կարօտ ես,
Քուն մի լինիլ, բացուելը տես,
Որ տերևներէն հոտոտես,
Ման արի զգուշիկ սոխակ։

Փիլոնն եմ, քեզ գովեմ ձրի,
Ստուած խորհուրդդ կատարի,
Զգոյշ կաց որ քեզ չը խրի,
Վարդենու սուր փշիկ սոխակ։

## 62. ԲԵԱՐԱՄԻ.

Մէկ ժամդ ինձի համար, հազար օր դառաւ,
Արի, սրտիս սիրականը, ուր ես դու,
Սիրոյդ համար սիրտս է մնացել ծարաւ,
Արի, սրտիս պատուականը, ուր ես դու,։

Դու ինձ մի մոռանայ, շուտ արի կեանքս,
Իմացիր ցաւերս ու հանգամանքս,
Որ զուր չանցնի մանկութեան աշխատանքս,
Արի, սրտիս դանձարանը, ուր ես դու։

Ֆիզահն եմ այսքան օր քու սէրդ քաշող,
Ճանապարհդ սպասող, սրտիկս մաշող,
Արտասուքս հեղաւ, ինչպէս մաքուր ցող.
Արի, երկնից ծիածանս, ուր ես դու։

## 63. ԹԻԹԵՌ.

Քու սէրդ սոխակից շատ է,
Կրակի սիրահար թիթեռ,
Գիտեմ որ սէրդ հաստատ է,
Եղել ես նետահար թիթեռ։

Սոխակի պէս սիրէ ծաղիկ,
Սէր քաշէ ինչպէս աղունիկ,
Մի հագնիր կրակէ շապիկ,
Դու իրը խելագար թիթեռ։



Զուր տեղը կեանքդ կմաշես,
Կրակով անձդ կխաշես,
Այդքան սէր թէև կը քաշես,
Բայց չես դու բարերար թիթեռ։

Խելքի արի, կրակն ատէ,
Զուր տեղ մեռնելը շատ վատ է,
Ֆիզահուս խօսքին նկատէ.
Նա չէ քեզ չարարար թիթեռ։

## 64. ԱՉԽԱՐՀ.

Արևն ու լուսինը տեղից չի խախտի,
Աշխարհը կդառնայ անիւի նման,
Ինձ նման մարդիկն են մնում կէս բաղդի,
Մրջիւնը մեծնում է արծիւի նման։

Աշխարհը մի շրջող նաւ է մեզ համար,
Միշտ որոգայթ բերող ցաւ է մեզ համար,
Լցուող ու դարտակուող դաւ է մեզ համար,
Ծնուող, վախճանողն է անթիւի նման։

Շատ մարդիկ աշխարհից կարօտ մնացին,
Մարդն է մէկ ծառ, աշխարհը կտրող կացին,
Մահի ձեռքից շատ մարդիկ դառն լացին,
Ֆիզահուս կեանքն է խռիւի նման։

## 65. ՔԵԱՐԱՄԻ.

Մէկ օգնական չեղար ու ինձ չօգնեցիր,
Չը թողիր ոստերիս մի տերև, բաղդս,
Կեանքիս պատմութիւնը բաց ու ընթերցիր,
Աչքիս վտակն արիր դու անձրև, բաղդս,

Դու չեղար համեմատ ինձի հետ ընկեր,
Չը թողիր երեսիս մարդկային պատկեր,
Զօրս խաւար անցաւ, դիշերս-դիշեր,
Կարեցիր ինձանից արևը, բաղդս։

Ասա, քեզի ինչ որ տալիք եմ. ես տամ,
Իմ պարտքիցս ազատուիմ ու ազատ մարդ դամ,
Մի ուրախ օր ճարեմ. փոքր ինչ խնդամ,
Ֆիզանն եմ, չեմ ուզում օրս սև. բաղդս,

## 66 ԿՌՈՒՆԿ.

Զայնդ սիրուն ու շատ անուշ երգող ես,
Արի, մեր աշխարհը կապուտիկ կռունկ,
Զագիկներդ դու ամեն տեղ դրկող ես,
Երկիրները ժուռ գալող խատուտիկ կռունկ։

Ունիս արդեօք մեր աշխարհէն դու խապրիկ,
Կամ թէ հետդ բերել ես ինձ նամակիկ,
Այժմ չեմ ես թօթովախօս մի մանկիկ,
Ճանաչիր, աշխարհն է վաղանցիկ, կռունկ։



Երկնքի երեսին կը թռչես արագ,
Փետուրներդ սև են, ոտքերդ բարակ,
Հայրենիքէս եթէ բերել ես նամակ,
Տուր Ֆիզահուս ընծայ, երջանիկ կռունկ։

## 67. ՂԷԼԷՆՏԷՐԻ ՄԻԽԷՄՄԷԶ

Արի սիրելիս, իմ սիրոյ ընկերն եկաւ անցաւ,
Աֆսոս, մանկական օրերիս գիշերն եկաւ անցաւ,
Կամ ինձ մաչող լուսատու պատկերն եկաւ անցաւ,
Գիտցիր պատուելի, թշնամու սուսերն եկաւ անցաւ,
Աչքիս լողատու լուսեղէն լապտերն եկաւ անցաւ, 1.
Սրտիս գրգիռն ու ցաւալի ստուերն եկաւ անցաւ 2,

Մերկացած եմ ես, լուսեղէն հագուստս. ուր ես դու,
Ժամս մերձեցաւ, հոգեկան գալուստս, ուր ես դու,
Մտքով տկար եմ, ուսումով հարուստ, ուր ես դու,
Միշտ փնտռում եմ քեզ, թանկագին կորուստ, ուր ես դու։

Ես քու Ֆիզանդ եմ շուտ հասիր, տկար մնացի ես,
Անկիրթ, անուսում, յետագէմ—յիմար մնացի ես,
Վիճակով անբաղդ, գործքովս անճար մնացի ես,
Վայրերի տեղերում, իբր չոր քար մնացի ես ..

---

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը։

## 68. «ԽԵԼԻՆ ԽՐԱՏ ԱԵԼԻՆ ՍԱՊՈՆ»...

Խելին հազար տը խրատ տաս,
Կասէ քեզնից գիտնական եմ,
Չի գիտեր օգուտ ու վնաս,
Կասէ ես ինձ պահապան եմ։

Աշխարհումը անուն չունի,
Գիշեր ու ցերեկ քուն չունի,
Թէև մէկ փոքրիկ տուն չունի,
Կասէ հիւրի օթեան եմ։

Վառարանում հուր չի ճարուի,
Գաւերումը ջուր չի ճարուի,
Քարղանում ապուր չի ճարուի,
Կասէ ես մի լի սեղան եմ։

Ինքը տկլոր առանց հալաւ,
Կը նմանի աղքատի հաւ,
Ելբէք չունի բարի համբաւ,
Կասէ սիրոյ, սիրաբան եմ։

Շատ չունի իրան բերանը,
Սուրբ չի պահէ պատուիրանը,
Չի տեսներ աչքի գերանը,
Կասէ թէ ես վարժարան եմ,

Քիթն է ծուռ կարթի նման,
Դէմքը թոռմած վարդի նման,



Խօսք չի խօսիր մարդի նման,
Կասէ միշտ խօսող բերան եմ։

Երեսն է միշտ սև մրի պէս,
Ունքերն է քրտի թրի պէս,
Մտքովը մոլոր կուրի պէս,
Կասէ. Ֆիզահ, բառարան եմ

## 69. ՍԱՂՐԴԻՐԱՆԻ.

Արեգակից գեղեցիկ ես, կերպդ է լոյս տիրուհի։
Հոտով բալասան ծաղիկ ես, դրախտի լոյս սիրուհի,
Ամեն մի գեղեցկուհուց դու գովական ես պատուա-
կան,
Ինչու համար սև ես հագել, դարձեալ ես կոյս սի-
րուհի։

Այսքան ամ է քու սիրոյդ, կրակի մէջ այրվում եմ,
Կարող չես ինձ պէս խեղճին տալու մի լոյս սիրուհի,
Վարք ու բարքդ մի փոխիր, դու գովասանք շատ
ունիս,
Չէ, դու իմ նազելիս ես, և աչքերուս լոյս սիրուհի։

Խեղճ Ֆիզահդ եմ ցաւալի, միշտ քեզ կոչում եմ, սվ
սիրուն,
Անօգնական խղճուկ եմ, եղիր խրախոյս սիրուհի։

## 70. ՀԻՃԲԷՆ ՔԵԱՐԱՄԻ.

Ահա որդիք ես ձեզանից հեռացայ,
Բռնուաւ իմ բաժին արեգակ աշխարհ,
Ցաւն մեծ էր, վասն այն ես ձեզ մոռացայ,
Առնուաւ իմ բաժին լուսնիակ աշխարհ։

Այս աշխարհը մարդու ցաւի տուն է միշտ,
Կը թօթափէ մարդկանց վերայ ցաւ ու վիշտ,
Երանի արդարոց, որ գործերն է ճիշտ,
Պատռուաւ իմ բաժին մէկ մուրհակ աշխարհ։

Անկողինս ձեզի թողի յիշատակ,
Բարի ժամի ինձ պատահեց հրեշտակ,
Մարդը ունայն աշխարհին է միշտ փափագ,
Ծարաւած Ցիզահուն մի դորակ աշխարհ։

## 71. ՎԱՐԴ ԿՕՉԻԿ. (Թարգ. տաճկերէնից)

(Տղայի և աղջկայ բերանից)

Աղջիկ — Մեր տան մէջ քնող տղայ,
Կարմիր խնձոր ծախող տղայ,
Վարդ կոշիկս դտնող տղայ,
Տղայ, ղրկէ վարդ կոշիկս,
Վարդ կոշիկս, վարդ կոշիկս, 1.
Վարդից գեղեցիկ մաշիկս։ 2.

1—2 Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը.



Տղայ — Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կոշիկդ դտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կոշիկդ,
Վարդ կոշիկդ, վարդ կոշիկդ, 1.
Վարդից գեղեցիկ մաշիկդ։ 2.

Աղջիկ — Լաւ օրս եղաւ ախ ու վախ,
Կորցուցի կոշիկս, աւաղ,
Հայի տղայ հոգուդ մատաղ,
Տղայ, ղրկէ վարդ կոշիկս..,

Տղայ — Որ մօտս չէ, ուրտեղից ճարեմ,
Ելլի, խօսքդ կը կատարեմ,
Ադնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կոշիկդ...

Աղջիկ — Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղուռնիկ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղայ ղրկէ վարդ կոշիկս...

Տղայ — Ես գիտեմ դու անդրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Հասակովդ էլ փոքրիկ ես.
Իմ մօտս չէ. վարդ կոշիկդ...

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել յիշեալ տողերը։

Աղջիկ — Մի մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ տաս-չորս տարեկան։
Ես կը լինիմ, քեզի սիրական,
Տղայ, ղրկէ վարդ կոշիկս...

Տղայ — Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս տամ հազար դահեկան,
Եթէ կ'լինիս ինձ սիրական,
Ճարելու եմ վարդ կոշիկդ...

Աղջիկ — Մնացել եմ սուգ-սևաւոր,
Գործքովս չեղայ փառաւոր,
Խեղճ Ֆիզահն է մեզի քաւոր.
Տղայ. ղրկէ վարդ կոշիկս...

Տղայ — Ինչի կը մնաս սգաւոր.
Գործքովդ եղիր թագաւոր.
Եթէ Ֆիզահն է մեզ քաւոր,
Իմ մօտս է վարդ կոշիկդ...

## 72. ՄԱՄՄԱ (պահուստ—հանելուկ).

Ո՛վ գիտնական, պահուստս գիշեր ու ցերեկ բանում է,
Իրան սիրահար մարդկանց ստիպմամբ գործի գնում է,
Բոլորովին պահուստս վախ չունի մեր այս աշխարհից,
Մէկի կայքը խլելով, միւսի տունը տանում է։



Իմ պահուստս մի ծառ է, տերև ունի, արմատ չունի,
Տերևը որ հաւաքես, գումարը մէկ տեղ մնում է,
Երկու հարիւր քառասուն չորսից աւել համար ունի,
Բայց սրա հեղինակը մարդու ջէբից դանձ հանում է։

Քսան և չորս մարդ ունի—աղջիկ, տղայ և ծերունի,
Ծերունուն իւր մահակով, քանի ծեծ տաս հաստանում է։
Անդամ ունի, ոտք չունի, աշխարհի մէջ ման է գալիս,
Ճարպիկ օրիորդ ունի, իրան թելիկը մանում է։

Իմ պահուստս էլ ինձ նման, մօրից տարաբաղդ ծընուել է,
Խեղճ Ֆիզահու բաղդի պէս, ամեն ըոպէ քնում է,
(Այս հանելուկի անունը 12 գրով կը կապուի, վանկն էլ 4—է,
Հաշիւն է 19, 4, 11։ Ով որ գտաւ մի երգ կընծայեմ)։

## 73. ԴԷՍԻԹԱՆ.

Ձեզ պատմեմ իմ տեսած բոլոր օրերս,
Ը տեսայ խնդում ու բարի ժամանակ,
Գիշերի պէս անցան բոլոր զօրերս,
Իմ մէկ ցաւս եղաւ շատին օրինակ։

Ուրթն ամաց մէջ էի, մայրիկս մեռաւ,
Սրտիս սիրականը ձեռքիցս թռաւ,

Մի օր կուշտ էի տաս օր ծարաւ,
Աչքերէս պակաս չէր արտասուաց վտակ։

Հայրիկս ամուսնացաւ, առաւ մի այլ կին,
Ստուած առնի անգութ մարդու վատ հոգին,
Խնամք չունէր նա իմ վերաս արտաքին,
Հացի տեղակ կուտար, ծեծ-քաշ ու ապտակ։

Հայրիկս էր կայքով փողալի—հարուստ,
Չէր ուզեր որ անէր մեզ համար հագուստ,
Մեր հագածը, իբրև գնում էր կորուստ,
Չէր ասեր թէ ունիմ խղճուկ-որբ զաւակ։

Երեք տղայ մայրս իր հետը բերեց,
Խնդաց, ուրախացաւ ու լաւ կեանք վարեց,
Անշէջ հրով ինձի այրեց ու դաղեց,
Քաշում էի մի անտանելի կրակ։

Վատ օր շատ քաշեցին խեղճ քոյրիկներս,
Ապտակով թառամաւ իմ լոյս պատկերս,
Գլխիս գաբկելով կուրացաւ աչքերս,
Չէի տեսնում սև ու կարմիր, սպիտակ,

Խորթ եղբայրս եղաւ մեր տանը ծաղիկ,
Մայրս էր բերել մէկ մանչ, երկու հատ աղջիկ,
Նրանք էին հօրս համար անդրանիկ,
Վարում էին լաւ կեանք, փառաւոր վիճակ։

Ինձ տուին մի երգչի մօտ աշակերտ,
Սաղ ածել սորուեցուց ու արաւ վարպետ,



Նա էր ինձի ուսում տուող վարժապետ,
Որից ես սորուեցայ տաւիղ ու ջութակ։

Գոչում էի սուրբ Յովհաննէս—Մկրտչին,
Բարեխօսէր ինձ համար Յիսուս—Փրկչին,
Իմ աչքերիս լուսոյ նշոյլ հասուցչին,
Ժուռ կուգայի ոտաբոբիկ, անգտակ,

Երազումս տեսայ մի քրդի զինուոր,
Ալ շորերը հագին, ինքը փառաւոր,
Ասաւ, Յովհաննէսն եմ Յիսուսին քաւոր,
Դուռս արի, որ տեսնես լոյս արեգակս»։

Ծնողացս իմ երազս պատմեցի,
Խորթ մօրս սրտի մէջ վիշտ, կրակ լցի,
Հայրիկս ասաւ, մի ամիս դու լուռ կեցի,
Մինչ քեզ համար առնեմ մի փոքր աւանակ։

Ինձ ճանապարհ դցեց ուխտաւորի հետ,
Ընկեր եղայ բազում ձիաւորի հետ,
Ճանբան աչքս բացուեց տեսայ Մուրատ գետ,
Աչքիս երևում էր ճանբան ծուռ-շիտակ։

Գոչում էի ով սուրբ, ես քեզ եմ ծառայ,
Թիլթեռի պէս սիրոյդ կրակով վառայ,
Հաւատով խնդրեցի, աչքի լոյս առայ,
Աչքերուս լոյս տուեց, ինձի յիշատակ։

Սաղացան աչքերս, դարբին եղայ ես,
Ինձիս վերայ աւելի ցաւ բերի ես,

Եղել էի իմ կամքովս թեքի ես,
Ջինում էի խոփ կացին և ուրագ։

Այդ միջոցին իմ հայրիկս վախճանաւ,
Հօրս մեռնելովը ունեցայ մեծ ցաւ,
Մնացի խեղճ, դառն աղքատ, անհալաւ,
Թշնամիքս եղան ինձ հետ հակառակ։

Մեր կայքով մայրիկս մեզ չը շահեց,
Հօրս բոլոր գանձը գողացաւ-պահեց,
Մեր հայրական հացը մեզնից խնայեց,
Ջրկելով չը տուեց ինձի մի ստակ։

Երկու քոյրիկս ու ես եղանք ցիր ու ցան,
Նրանց թողի անտէր, փախայ Երևան,
Բարեկամքս չեղան մեզի օգնական,
Ընդում էի անգործ ու առանց վաստակ։

Ընդում էի շատ անգամ ես անկօշիկ,
Գլուխս բաց, ու մարմինս անշապիկ,
Ցանկարծ սիրտս դարձաւ դէպ իմ հայրենիք,
Վերջն եկայ Ալէքսանդրապոլ քաղաք։

Ամուսնացայ ես Ալէքսանդրապոլու մէջ.
Կրակ ձգի իմ սրտումս ես անշէջ,
Գրպանումս մի ստակ չէր ճարուի հէջ,
Գնացի իմ ամուսնուս հետ ես պսակ։

Պսակուեցանք, դարձայ ընկերիս զերի,
Մի հարուստից տասն ռուբլի պարտ արի,



Թել ու մաստաք առայ չարչուքիւն արի,
Միշտ կերթայի Գիրաքլար ու Քեափանակ։

Չարչուքիւնով ճարեցի գիւղում անուն,
Գիշեր ցերեկ աչքերիս մօտ չեկաւ քուն,
Աշխատելով վերջն առայ ինձ մէկ ֆուրգուն,
Բեռը բարձած տանում էի ես արագ։

Առայ դերդաստանս Կարին գնացի,
Կարօտ չէինք ոչ ջրի և ոչ հացի,
Միայն հայրենիքիս կարօտ մնացի,
Կարինում ես տարայ ֆուրգունն օրինակ։

Կարինի մէջ ինձ լաւ վիճակ ճարեցի,
Ասի աղքատութեան, դու մէկ կողմ կեցի,
Շատ մարդկանց բեռ դէպի Պոնտոս կրեցի,
Բաղդս աշխարհին եղաւ մի կտրող դանակ։

Երեք ֆուրգուն պարագիւք ես առայ,
Աղքատութեան վատ օրերը մոռացայ,
Ափսոս, քոյրիկներէս ես շատ հեռացայ,
Բայց միշտ կուղարկէի նրանց սիրոյ նամակ։

Շատ մարդիկ կասէին թէ լաւ տղայ է,
Ինքը խոնարհ, կարծես իսկ աբեղայ է,
Շատ-շատերից առատաձեռն ազայ է,
Վարք ու բարքով է մի փայլուն արեգակ։

Մինչև երկու տարի լաւ օր ունէի,
Վիշտ ու հոգսեր ամենևին չունէի,

Ամեն օր, ամեն ժամ, նոր միտք ունէի,
Մտածելով որ անունս է իբրև ակ։

Կարին եկաւ մեզ տեսութեան զոքանչս,
Գրկելով սիրում էր Կարապետ մանչս,
Հասկացայ, որ նա է իմ չար ճանանչս,
Տուեց ինձ ձեռքովը խեղճութեան բաժակ։

Ընկերիս հետ, երբ զօքանչիս, գրկեցի,
Աղքատութեան լուծը դարձեալ գրկեցի,
Դառն արտասուոր ողջ մարմինս ներկեցի,
Զոքանչս իսկ եղաւ գործիս հակառակ։

Նորանից յետ մեծ ցաւի մէջ ընկայ ես,
Ցուրդուններիս մի լաւ գնող գտայ ես,
Ասի Աստուած, դու ինձ զղջերից պահես,
Անտառի մէջ ինձ հանդիպեց աւազակ։

Անգութ քրդերն ինձի չուտ մերկացուցին,
Մահու գաւաթներով ինձ ջուր խմցուցին,
Շատ ծեծելով վերջը ինձի լացուցին,
Տարան ունեցածս ինձի թողին դարտակ։

Եկայ մեր քաղաքը, հասայ մերկաբաց,
Մէկ աչքս էր ծիծաղ ու միւսը լաց,
Որովհետև թշնամիս վրաս խնդաց,
Նորանց խօսքը սրտիս եղաւ մի նիզակ։

Երգչութիւնը ինձ արհեստ էր բնական,
Միտք արի որ, լինիմ ես աստանդական,



Քնարս առայ, գնացի դէպ Տաճկաստան,
Որ բարեկամքս ինձի չանեն խայտառակ։

Մինչև Ամասիայ քաղաք գնացի,
Երեք դաւրիշի մօտ ես ծառայեցի,
Ինն ամիս նրանց մօտը մնացի,
Տեսան որ շատ ժիր եմ ու շատ ընդունակ։

Դաւրիշները իմ բաղձանքս կատարին,
Ինձի համար հազար հնարներ ճարին,
Երգչութեան անունս Ֆիզահի դրին,
Ինձի կոչեցին բանաստեղծ ու հեղինակ։

Խորհուրդ արին, ինձի զրկեցին Պօլիս։
Իրանց կեանքից աւելի կըսիրէին զիս,
Ինձի համար զարձան նրանք Վեհ-Մասիս,
Որոնց ծաղկին էի մշտապէս փափագ։

Պօլսու մէջը կեցայ ինները ամսու չափ,
Մէկ ժամ չէի մնար անգործ ու պարապ,
Ումնից ինչ ուզէի, կուտային շտապ,
Եղել էի ինչպէս հրգասաց սոխակ։

Ցետ դառնալով եկայ իմ հայրենիքս,
Հոտոտեցի իմ նազելի ծաղիկս,
Կենդանի էին ընկերս ու աղջիկս,
Իմ կեանքս էլ եղաւ հեքեաթ ու առակ։

Բարի միտք ճարեցի սրտիս մէջ դանդաղ,
Այժմ ես ման կուգամ մտքով կաղ ի կաղ։

Մի փոքր լոյս ընկաւ երեսիս ծիծաղ։
Քանզի որդիք ունիմ ես անշամանդաղ,

Ինձի սէր պարգևող Աստուծուն մատաղ,
Ածում եմ ջուլթակս ու երգում եմ խաղ,
Որովհետև կեանքս է հանգիստ ու խաղաղ,
Կայ Ֆիզահուն Փրկիչ Որ էնն միայնակ։

## 74. ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՒ ՍԵՂԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ.

Արժան է գովաբանել պարոն կառավարչին,
Պէտք է մենք ընկերութեամբ խորհուրդ տանք իւր գրչին,
Եւ գովելով գոհանանք միաբերան Փրկչին,
Աղերսենք մենք սուրբը հոգով մեր բաղձանք լեցուցչին,
Ինչ որ կուտէք փառք տուէք միք պտրել շատ ուրչին։

Աստուած տացէ Սուրբը շնորհք որ ձեզ լաւ կառավարէ.
Եւ բնական ձրգովը բարի խօսքեր հնարէ,
Որ ընդհանուրդ ասէք մեր թամատեն՝ ճարտար է,
Թանկագին դաւթները Սուրբ սեղանին մէջ շարէ,
Առաջարկէ կենացը Օհանէս Մկրտիչին։

Այստեղ աւել արժան է Կառավարչին գովասան,
Կառավարչի ընկերքը մէկ մէկից պատուական,
Ամեն կենաց խմում են խօսք են խօսում հիմնական,
Ծննդական շնորհքով և միտք ունին բնական,
Ուրախ զուարթ խնդալով նայում են ձախ ու աջին։



Կառավարիչ միտք ճարէ քեզի ուղափառի պէս,
Քու մաքուր խնճոյքիդ մէջ եղիր դու հեզ գառի պէս,
Բարոյական խօսք խօսիր ընկերտանցդ ճառի պէս,
Ծխէ բարոյական ֆոտ դու փրկչին փուրվառին պէս
Միտք բերելով յիշեցէք որը Ֆիզահի երդչին։

## 75. ՁՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Ընկեր՝ չունիմ մէջս տաղանդ
Թէ ես չունիմ դու էլ չունիս,
Երակիս մէջ ջանք ու եռանդ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Վատ մարդու հետ հաշիւ չունիմ՝
Սիրամարդեմ արծիւ չունիմ,
Ընկերի մօտ պատիւ չունիմ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Վիճակս վատ է մի անգամ,
Ցաւով լցուած եմ հարաժամ,
Ինձի օգնող լաւ բարեկամ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Ես քուն չունիմ գոր ու գիշեր,
Չունիմ մի ցաւալի ընկեր,
Եւ հեռատես պայծառ աչքեր,
Թէ ես չունիմ դու էլ չունիս,

ՄՈՍԿՈՎՍԿՈՅ ԳՈՍՈՒԴԱՐՍՏՎԵՆՆՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ

Ֆիզան եմ ուսումով աղքատ,
Օգնող չունիմ ինձ հարազատ.
Այլերն ունին ոսկի արծաթ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

## 76. ՎԱՏ ՄԱՐԴ.

Ով պատանի անկիրթ անմիտ խելագար,
Թագաւոր ես դառել դու քեզի քեզի,
Միտք ճարէ քեզ, որ դուն լինիս հեզիկ դառ։
Դատաւոր ես դառել դուն քեզի քեզի,

Նիզակ խօսքով մարդոց սիրտը ծակում ես,
Սրտի ապակին կոտրում—քակում ես,
Այլոց աջողութեան դուռը փակում ես,
Մեղաւոր ես դառել դուն քեզի քեզի։

Աչխատէ միտք ճարես անձիդ հարազատ,
Որ փորձանաց տանից դուն լինիս ազատ,
Ֆիզան տալիս է քեզի բարի խրատ,
Սգաւոր ես դառել դուն քեզի քեզի։

## 77. ԴԻՐԱՆԻ.

Թող մնայ իմ անունս այլոց խայտառակ թող մնայ։
Եւ իմ ազգու խօսքերս աշխարհին առակ թող մնայ.



Իմ կարճատես անձովս թափառվում եմ օտար տեղեր,
Ինիրաւ բաղդս ինձ վերայ այդպէս հակառակ թող մնայ։
Կան մարդիք որ խելք չունին բաղդովը անչափ խրն-
դում են,
Իմ ապերախտ վատ բաղդս ընկած ծառի տակ թող
մնայ,
Չեմ գիտում թէ ուր գնամ կամ ում խօսիմ դաղտ-
նիքներս,
Չեմ ճարէ խորհրդակից բարութեան փափաղ թող
մնայ.
Իմ երգերս էլ ինձ նման անձով տարաբաղդ ծնուած են,
Անօգնական Ֆիզանու ցաւերը կրակ թող մնայ։

## 78. ՄՈՒԽԱՄՄԷԶ ՍԻՕՆԻ.

Օգնեա՛ ինձ Հայր երկնային թագաւոր,
Մնացել եմ տրտում տխուր սգաւոր,
Քու անունդ է աշխարհի մէջ փառաւոր,
Գոյթ-ունեցիր դու մեզ վերայ թեւաւոր,
Դու ես ամէն մէկիս ընտիր դատաւոր։

Սուրբ սիրովդ իմ անձս կը չարչարեմ,
Քեզ յայտնի է որ ես խղճուկ անճար եմ,
Ուր գնամ որ սիրոյ դաւառդ ճարեմ,
Առանց բժիշկ անտեղուճար տկար եմ,
Տգէտ եմ ես ոչ թէ իմաստ լուսաւոր։

Սուրբ սիրուդ հետ գիշեր ցերեկ լալիս եմ,
Տրտում տխուր աշխարհը ման գալիս եմ,
Ջերմ սիրովդ սրտիս եղը հալում եմ,
Վիշտ ու կրակ իմ անձիս մէջ լըլում եմ,
Իմ եռանդս ինձի չեղաւ բաղդաւոր։

Լաւ օրերս տրտում տխուր անցուցի,
Վիշտս մէկ-մէկ ցաւս հարիւր անցուցի,
Ընտասունքս բխող աղբիւր անցուցի,
Քու Ֆիզահդ եմ ջանքերս զուր անցուցի,
Իմ բաղդս է անխնամ ու ինձ նենդաւոր։

## 79. ՊԱՐՍԿԱՑ ԵՐԳԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

(տի զոյ եար մանի օլդ.)

Իմ կեանքս իմ սիրեկանինս է,
Աղնիւ ընկեր հոգի ջանինս է,
Իմ վարդս այդեպանինս է,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Պատանի երիտասարդ ես,
Սիրով սիրոյս հետ մակարդ ես,
Ես սոխակ եմ դու մի վարդ ես,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Նպատակդ կատարում ես,
Ուրիշ ընկերներ ճարում ես,



Զուր տեղը ինձ չարչարում ես,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Ինձ վերայ սէր բաղում ունիս,
Սոխակի պէս խօսում ունիս,
Եւ չափազանց ուսում ունիս,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Թշնամեաց լուրը լսում ես,
Զուր տեղը ինձ բամբասում ես,
Սպանելու սպասում ես,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Ֆիզահուն պէս անմիտ ես միշտ,
Վատ խօսքը կանես կեանքիդ վիշտ,
Սիրեկան կեանքս քուկդ է ճիշդ,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

## 80. ՀԵՂԱԾԲԱՆ.

Բնութեամբ հեղ պատանին,
Մեծին հակառակ չի լինիր,
Միշտ սիրող պատուիրանին,
Վարքով խայտառակ չի լինիր։

Ով չը պատվէ իրան հօրը,
Նրան հայ չի տար հզօրը,
Այնպիսի անմիտ աքլորը,
Արծիւ կամ տատրակ չի լինիր։

Ով որ ճանչէ իր համբաւը,
Նա չի տեսնի յանկարծ ցաւը,
Տեսէք ձմռաքեր ադռաւը,
Վարդասէր Սոխակ չի լինիր։

Ցեխի մէջ չի մնար ոսկին.
Մարդու անունն է թանկագին,
Ֆիզահի գուհար ապաքին,
Լուսին արեգակ չի լինիր,

## 81. ՏՈՒԲԵԻՏ.

Ես յիմար թիթեռի նման,
Ընկեր եմ կրակն ու լոցը,
Ցաւ եմ ճարէ ինձ սեպհական,
Մանկուգամ մահի փողոցը։

Մի մարդը որ մայը չունենայ,
Այրանկից եղբայր չունենայ,
Հոգով ցաւոց հայր չունենայ,
Կոտրի նրան օրօրոցը։

Պատռած վրան տուն եմ ճարել,
Տրտմութեան մէջ քուն եմ ճարել,
Լոկ Ֆիզահ անուն եմ ճարել,
Յաղթել եմ դատարկ քթոցը։



## 82. ԽԱՅԵԱԼԻ ԴԱՍՏԱՆ.

Տար Աստուած ինձ եռանդ հաստատ յոյս ու սէր,
Իմաստութեան սէրը ինձ սեպհական լինէր,
Ճարէի ես եռանդ խրախոյս սրտիս,
Միտքս ընտիր ձեռքս բնական լինէր։

Ինձ Աստուած ընծայեր խորամտութիւն,
Սողոմոն արքայի պէս իմաստութիւն,
Որ ճարէի իմաստութեամբ բարութիւն,
Ընկերս ինձանից գիտնական լինէր։

Ունենայի ինձ հարազատ գաւակներ,
Բարի համբաւ փառք ու անթիւ վիճակներ,
Մօտս երգող սիրամարդներ, սոխակներ,
Կացարանիս դուռը վարդարան լինէր։

Իմ խրճիթս չինուած լինէր զոհարով,
Լուսամուտը չինէին ողջ անգին քարով,
Ղամպարներ քաշ տայի ոսկեղէն լարով,
Այդպիսի թանկագին օթեան լինէր։

Սենեակիս չորս կողմը լինէր լի պարտէզ,
Չորս կողմերը ծաղկով լեցուն ասպարէզ,
Տեսնողներն ասէին Վէննա ու Պարէզ,
Պարտիզիս պահպանը ժրաջան լինէր։

Պարտէզս ունենար անուշահամ ջուր,
Խմողքն ասէին կաթնահամ ոգբիւր,

Ակի տեղը լինէր ոսկեղէն եղջիւր,
Գետը Տիգրիսի պէս հիմնական լինէր։

Իմ համբաւս խօսվէր ամենայն մի դեղ,
Բժիշկի պէս տայի ամեն ցաւու տեղ,
Անունս յիշէին թէ քաղաք թէ գիւղ,
Բարութիւնս այլերին պատվիրան լինէր։

Աղքատները հարուստից լաւ սիրէի,
Քաղցածներին միշտ հաց ու ջուր կրէի,
Աստուծու Սուրբ պատվիրանը տիրէի,
Առանց պարպելի Սուրբ սեղան լինէր։

Քրտինքովս միշտ ընտիր դատ դատէի,
Քաղցը խօսքերով այլերին խրատէի,
Միշտ գովէի, թշնամոցս չատէի,
Քարոզախօս ինձանում բերան լինէր։

Ունենայի ես ընտիր միտք շարունակ,
Հարիւր շտեմարան լիովին թանկագ,
Հազար գանձարանս լիովին ստակ,
Հինգ հարիւր սօմռի չափ կարկենան լինէր։

Ունենայի տասը հազար ջրաղաց,
Քաջ հողագործի պէս ցանէի շատ հաց,
Սեփացոց դաշտը ձեռքովս վարած,
Անչափից յաւելի ինձ գուրթան լինէր։

Ես լինէի Մամիկոնեան ցեղիցը,
Հայրս լինէր Վասպուրական գեղիցը,



Ճաշակէի Վռշտունեաց եղիցը,
Իմ պապիս անունը քաջ Վարդան լինէր։

Զը պատահէր անձիս վրայ յանկարծ ցաւ,
Ճարէի երջանիկ բարութեամբ համբաւ,
Կարել տայի ինձի ոսկեզօծ հալաւ,
Եւ ձեռքիս օձախիշտ գաւազան լինէր։

Երգով գովասանէ անունդ Ֆիզահ,
Չէ սեպհական կեանքիդ արիւնդ Ֆիզահ,
Հողէն ծնուած, հողն է քու տունդ Ֆիզահ,
Փակուած ու կնքուած գերեզման լինէր,

ՎԵՐՋ

*Պատիւ ունիմ նուիրելու իմ այս փոքրիկ գրքոյկս մեք Աղէքսանդրապոլու Հայ հասարակ դասակարգին 'ի պատիւ քարոզաձնունդ կապիտան Պ. Էմիլիա Խրիստիանովիչ Ստրաղովսկուն, որը խօլերայի ժամանակ իւր անթիւ քարեգործութեամբ պարտաւորցուց մեր մեծամասն հասարակութեանը, որպէս զի միշտ յիշուի նորա անմոռանալի յիշատակը։*

*Նրգիչ Փիզահի։*

Нашему народному благодѣтелю Капитану

**Эмилію Христіановичу Страдовскому.**

Къ твоимъ, благодѣтель, я ногамъ
Несу радость и печали,
Мечты, что сердце волновали,
Веселью и грустью пополамъ.

Припомни день, когда ты долю
Слоясь задумчивой главой,
Внимала народному глаголу,
Своей великой душой.

Я мыслилъ, пѣсни тѣ слагая,
Онѣ невѣдомо замрутъ,
Но ты далъ имъ, о великодушный,
Свою защиту и пріютъ.

Встрѣчай въ солнце и въ лазури,
Благодѣтель, радостные дни,
И насъ, пѣвцовъ, въ годину бури,
Въ своихъ молитвахъ помяни.

---

ԱՌ ԿԱՊԻՏԱՆ ՍՏՐԱԴՈՎՍԿԻ.

Ա. Մի ողորմած ազնիւ մարդ է,
Մարդ պատուական կապիտանը,
Ատծու սիրոյն մակարդ է,
Ուսումնական կապիտանը։

Բ. Շատ մարդոց ձրի դեղ դրկեց,
Ցաւի նեղութիւնից զրկեց,
Մարդոց խօլերի ձեռքից փրկեց,
Ազնիւ զովական կապիտանը։

Գ. Էմիլիա էր իւր անունը,
Ատուած փառքով լցնէ տունը,
Շատ մեծանայ յարգութիւնը,
Այս զովական կապիտանը։

Դ. Սրտին բարի խիղճ ունի հաստատ.
Քովը մէկ է հարուստ աղքատ,
Շատ մարդու արաւ ցաւից ազատ,
Սէր սիրական կապիտանը։

Ե. Գովէ Ֆիզահի արժան է,
Այդ մարդն Ատծու պատուական է,
Հոգին դրախտի արժան է,
Բարոյական կապիտանը,

## ԽՕԼԵՐԱՅ.

Ա. 92 տարուան հետ եկաւ աշխարհ,
Զգեց աշխարհի մէջ կրակ խօլերան,
Հազար տեսակ մահու հանդերձներ հագաւ,
Շատ մարդ թողեց կեանքից փափագ խօլերան։

Բ. Յունիսից սկսեց մինչև Օգոստոս,
Վատ խօլերան դառաւ մարդկանց չար հերոս,
Յանկարծ զարկեց ձգեց շատին դար ու փոս,
Շատին էլ վախցուց այս անիծուած խօլերան։

Գ. Առաջ Աւղանստան երկիրն ընկաւ,
Ասխաբատ, Ղուբա, Դարբազ ման եկաւ,
Բագու հասաւ ծովի մէջ չնկղմաւ,
Մարդ սպանեց առանց դանակ խօլերան։

Դ. Բագուի մէջը դերասանութիւն արաւ,
Ուրախ մարդոց աչքին լաց ու կոծ բերաւ,
Մօտ չորս հազար մարդկանց գլուխ կերաւ,
Դառաւ բոլոր մարդկանց ներհակ խօլերան։

Ե. Շամախուց սկսեց Նուխու գիւղերը,
Ջարդեց Ղարաբաղու թուրք ցեղերը,
Մարդկանց չօգնեց բժիշկների դեղերը,
Մարդկանց կոխեց սև հողի տակ խօլերան։

Զ. Եւլախից մինչև Դանձակ աւիրեց,
Երկաթուղով գնաց Տփխիսին տիրեց,



Ուրախ մարդոց վերայ սուգ ու սև բերեց,
Շատին տարաւ առանց ցաւի խօլերան։

Է. Ինսուն ու եօթը նահանգի հողեր քալեց,
Հարիւր յիսուն հազար մարդոց հալածեց,
Շատերու սիրելին ձեռքիցը խլեց,
Մարդոց խմցուց մահու բաժակ խօլերան։

Ը. Խօլերայի ձեռքից շատ մարդիկ լացին,
Անթիւ որբեր առանց հայր մայր մնացին,
Ողջ աշխարհը բողոք արին դուռացին,
Մարդոց թողեց լաց աղաղակ, խօլերան։

Թ. Մարդ չթողեց ողջ աշխարհը խորտակեց,
Երևանի գիւղ ու քաղաքը քակեց,
Ծուխը կտրեց մարդոց դռները փակեց,
Արիւնախում անձի Վասակ խօլերան։

Ժ. Մի կողմից կաճկաճոց օրերը բացուաւ,
Մարդը սև դագաղով կաճկի մէջ լցուաւ.
Մարդ ու կին ջուխտ մեռան դռները գոցուաւ,
Թողեց նրանց դռները փակ խօլերան։

ԺԱ. Ամեն քաղաք թէյարաններ շինեցին,
Փող մօտ արին թէլ ու շաքար դնեցին,
Ամեն կողմի ճամբու պաշտպան հանեցին,
Ցոյց չտուեց մեզի քամակ խօլերան։

ԺԲ. Զուկայի սարկիճիք կենդանի մեռան.
Երկու ֆունտ միրգ ոչ ծախեցին ոչ առան,

Ամեն մի մարդ անգործ նստաւ իր դռան,
Նրանց թողեց առանց ստակ խօլերան։

ԺԳ. Կապիտան Ստրադովսկուց ձրի դեղ բերին,
Լալով կաղաչէին երկնային Տէրին,
Տասը գիշեր աղաղակ ու հսկում արին,
Մահի վախով զարկեց կոչնակ խօլերան։

ԺԴ. Մարդոց օգնեց Էմիլիա կապիտանը,
Աստուած օրհնէ հոգին ու պերդաստանը,
Ձրի կտար մարդկանց ցաւի դարմանը,
Աշխարհի մէջ դառաւ առակ խօլերան։

ԺԵ. Մօտ չորս հազար մանէթ նա դեղի տուեց,
Գիւղացու ու քաղքցու ձրի նուիրեց,
Աստծու սուրբ գրքի խօսքը կատարեց,
Բերեց անուն թանկագին ակ խօլերան։

ԺԶ. Կապիտանը հերոս եղաւ մեզ համար,
Ընծայում էր հիւանդներին դեղ ու ճար,
Աստծու սուրբ կողմից բանցուց մի հնար,
Աչքից բխեցուց վտակ խօլերան։

ԺԷ. Ամեն մէկին օգնութեան հասնում էր,
Մօտիկ կերթար, հիւանդներին տեսնում էր,
Դեղ ու ճարով փափագները լցնում էր,
Ման էր ածում նրան արագ խօլերան։

ԺԸ, Կապիտանի արածը շատերը լսել են,
Ընկած բերնէ բերան բաղում խօսել են,



Մարդիկ նրան ցաւի փրկիչ ասել են,
Կապիտանին տուեց կենտակ խօլերան։

ԺԹ. Կեցցէ մեր կայսրը, ունի այդպէս մարդ,
Օրէնքին հարազատ ու սիրոյ մակարդ,
Նրա հոգին լինի Աստծոյ քով վարդ,
Դեղով վախցուց փախցուց սոխակ խօլերան։

Ի. Ալֆինճանի, սպիրտը շատ մարդ գնեցին,
Վատ հոտի ջուր տներումը ցանեցին,
Կապիտանի խրատը շուտ կատարեցին,
Մեզանից հեռացուց կայծակ խօլերան։

ԻԱ. Խօլերան վատ սերմը աշխարհը ցանեց,
Ամեն մի մարդուց վրէժը հանեց,
Նոր նշանուած մանչ ու աղջիկ սպանեց,
Նրանց թողեց առանց պսակ խօլերան։

ԻԲ. Խօլերան անթիւ մարդկանցից վրէժ առաւ,
Սղաճանց Խաչն էլ էդ ցաւով մեռաւ,
Խղճուկ դերդաստանի ձեռքիցը թռաւ,
Կնոջը թողեց անյիշատակ խօլերան։

ԻԳ. Խօլերայի անխիղճ գործերը վատ է,
Ամեն մի ազգի մէջ անունը շատ է,
Աստուած մեզ խօլերի ձեռքիցն ազատէ։

ԻԴ. Խօլերան լռեցուց ջուլթակդ, Ֆիզահ,
Չի բառբառէ լեզուդ սոխակդ Ֆիզահ,
Վանդակի մէջ մնաց թուլթակդ Ֆիզահ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դու ասա՛, երկնուց էակդ Ֆիզա՛հ,
Նա կը լցնէ բարի փափագդ Ֆիզա՛հ,
Իսկ մարող է անշէջ կրակդ Ֆիզա՛հ,
Այս մի երգն է քո յիշատակդ Ֆիզա՛հ.
Վերջին գերեզմանն է վանդակդ Ֆիզա՛հ,
Մարդու պատանն է սպիտակ խօլերան։

*
* *

Դեռ ես չեմ տեսած քեզի պէս անմեան,
Լոյս շքեղ պատկեր, ով սիրուն սիրուն,
Գովեստդ կարդամ աշխարհ իմանայ,
Գոյս սիրոյ ընկեր, ով սիրուն սիրուն։

Քաջ համբաւովդ շատ մարդ զարմանան,
Միշտ գոր ու գիշեր, ով սիրուն սիրուն,
Անձիդ կտակը շատերն ընթեռնուն,
Թշնամեաց սուսեր, ով սիրուն սիրուն։

Վատ թշնամիքդ դանիցդ հեռանան.
Ով անձնուէր, ով սիրուն սիրուն,
Քեզ Աստուած շատայ յանկարծ պատուհաս.
Փորձանաց նուէր, ով սիրուն սիրուն։

Քնքոյշ վարմունքդ լուսնէն հանդերձ,
Տերև վարդիթեր ով սիրուն սիրուն.
Ասպարէզ ճակտիդ յոնքերիդ համեմատ,
Աչքերդ լապտեր, ով սիրուն սիրուն։



Մանր ականջներիդ գինտեր թանկագին,
Ակտունանք Սրբեր ով սիրուն սիրուն,
Պատկերդ տեսնող եղաւ խելագար,
Պատան կամ ծեր, ով սիրուն սիրուն։

Խղճուկ Ֆիզահուն քեզ հետ ընդունէ,
Աստիճանաւեր, ով սիրուն սիրուն։

## ՄԻԻՍՏԱՋԵՏ.

Սրի, սիրելիս, ես քեզի գոչում եմ յարաժամ,
Սէր ունիմ մի անգամ,

Քեզ փնտռելով աշխարհի մէջ պէտք է միշտ մանգամ
Գտնեմ, խորհուրդ տամ.

Քաշում եմ այսքան տանջանք ցաւ, կրակ քեզի համար,
Փափագ քեզի համար։

Սիրոյ գրիչով գրում եմ նամակ քեզի համար,
Ամեն մի ամ է ամ։

Մի խոժորվի դու ինձանից սիրելի անուշիկ,
Ձայն ունիս քնքուշիկ։

Ծանրամիտ եղիր, ընթանալդ ձայնդ հանէ յուշիկ,
Ես եմ քեզ բարեկամ։

Քո խղճալի Ֆիզահիդ եմ, ազնիւս, ուր ես արի,
Պատիւս, ուր ես արի։

Ձեր աշխարհից մի լուր բեր ինձ, արծիւս, ուր ես արի
Ցաւս ու վիշտս հոգայ։

## ՂԱՋԱԼ ԴԻԴԱՆԻ.

Մի զայրանայ ով սիրտ իմ, քանիմ ժամանակ համբերէ,
Եթէ ունիս սուրբ խորհուրդ, քեզ է նպատակ համբերէ։
Համբերող խեղճ մարդիկը վերջէն կըլինի բաղդաւոր,
Աչքերիդ արտասուքը թափելով վտակ համբերէ։

Երկնային սուրբը դաւառից Փրկչի սենեակի միջէն,
Աղօթք արա կստանաս, երկնային պսակ համբերէ։
Քու բաժինդ, քո տէրդ ամեն օրէօր քեզ կտայ,
Շնորհքով հարուստ կացիր, առանց ստակ համբերէ։

Քեզ ոչնչից գոհացնող ունիս հեղինակ ով Ֆիզահ,
Դու ծառայ Աստուծոյ ես խղճալի մշակ համբերէ։

## ՂՕՉՄԱ.

Մանկութեան օրերս երազի նման,
Թռչունի պէս արագ ձեռքիցս թռաւ,
Անձնակոտոր արաւ ինձ վազի նման,
Աշխարհի ցաւի մէջ թողեց ինձ դրաւ։



Էակն է այդեպան մարդը իւր ծառն է,
Եթէ կարէ ենչեալին կը խառնէ,
Իրաւ է Աստուած իրան տուածը ետ կառնէ,
Իմ մանուկ հասակս ձեռքիցս առաւ։

Ես մի օրը երեք արտ կըվարէի,
Երկու արօր շալակով կըտանէի,
Ցեխը սէղմէի նէ ջուրը կըհանէի,
Հիմա կասէն ծերուկ Ֆիզայի պառաւ։

## ԵՐԳ ԱՌ ՍԻՐԱԿԱՆ.

Հիմա սիրականս գալիս է,
Ինձ սիրով խորհուրդ տալիս է,
Ինձ հետ հեզիկ ման գալիս է,
Այդ մասին ճանպէն կսպասեմ։
Վարքը սիրուն բարքը սիրուն,
Վանդակը ջուխտ սոխակ ունեմ,
Մէկի ձայնը մէկից սիրուն։

Սիրականս դեղեցիկ է,
Մի հոտաւէտ վարդ ծաղիկ է,
Նա ինձ համար անուշիկ է,
Այդ մասին ճանպէն կսպասեմ,
Վարքը սիրուն բարքը սիրուն,
Վանդակը ջուխտ սոխակ ունիմ,
Մէկի ձայնը մէկից սիրուն։

Եթէ սիրեկանս չուտ հասնի,
Սրտիս պարտէզը վարդ կը բուսնի,
Թշնամին մօտէս չի անցնի,
Այդ մասին ճամպէն կսպասեմ,
Վարքը սիրուն, բարքը սիրուն,
Վանդակը ջուխտ սոխակ ունիմ,
Մէկի ձայնը մէկից սիրուն։

Սիրեկանս է ինձ բարեկամ,
Ինձի հետ սէր ունի անդամ,
Ֆիզահու կեանքն է յարաժամ,
Այդ մասին ճամպէն կսպասեմ,
Վարքը սիրուն, բարքը սիրուն,
Վանդակը ջուխտ սոխակ ունիմ,
Մէկի ձայնը մէկից սիրուն։

## Ա Ղ Ա Խ Ն Ե Ա Կ Ա Ղ Ջ Ի Կ.

Սիրուն դուստրիկ, սպիտակ ես ձան նման,
Աչքդ ու յոնքդ լուսով պատած աննման,
Ես չեմ տեսած գեղեցիկ համայն նման,
Սիրուն ոհ սիրուն, սիրուն, գեղեցիկ սիրուն։

Պատկերիդ տեսնողի կեանքը կէս կուլի,
Սիրահարուի նա ինձի պէս կուլի,
Ասում են սիրունի մօտ հանդէս կուլի,
Սիրուն, ոհ սիրուն, սիրուն, գեղեցիկ սիրուն։



Քո հանդերձդ մետաքսից կարած է,
Պողպատիդ վերա թանկագին ակ շարած է,
Քո նկարդ Փարիզ, Վեննա տարած է,
Սիրուն, ոհ սիրուն, սիրուն, գեղեցիկ սիրուն։

Թերթերիչդ սուր, յոնքերդ կամար է,
Սիրելիս գովեստ քեզի համար է,
Դու մի կարծեր թէ Ֆիզահն անճար է,
Սիրուն, ոհ սիրուն, սիրուն, գեղեցիկ սիրուն։

## Ե Ր Գ Մ Ե Ծ Ա Տ Ա Ն.

Լսեցէք այս ազքատ հպարտի վարքը,
Խոհեմամիտ գիտնականին չի հաւնի,
Մարդիկը լաւ գիտեն իրան վատ կարգը,
Ձքեղ խօսող բանականին չի հաւնի։

Ման կ'գայ աշխարհի մէջ մոլորած,
Հագած հանդերձն է պատառուած,
Իրա տունը չունի ճոթմ գարի հաց,
Դրացոց լի սեղանին չի հաւնի։

Ինքն է հողագործի ցանքին միշտ կարօտ,
Իրան բոլոր հացը չի լինի կէս կոտ,
Հորացած խոզանմ ունի մէջն է անարօտ,
Ծաղկով լիքը վարդարանին չի հաւնի։

Չի ասիլ թէ օգնիր երկնային հզօր,
Խելքը գլխից կը պակսի օր է օր,

Ինքը չունի երկու հատ հորթ կամ արօր,
Երկրագործի ճոխ գուլթանին չի հաւնիր։

Բարի ուսում չունի սրտին պատուական,
Չունի ընկերութեան մէջ բարի պայման,
Մարքի մէջ չկայ մի քթոց դարման,
Հազարասայլ բարդ օրանի չի հաւնիր։

Մի օր չի հանդարտի տարի կամ շաբաթ,
Գրպանում չի ճարուի չորս պլիկ արծաթ,
Կարօտ է գնելու թուղթ կամ մաղաղաթ,
Եւրոպացոց տպարանին չի հաւնիր։

Չի խնդրիր, թէ օգնիր ինձ երկնային ծնող,
Չի ասել թէ ունիք տուրը գիրք մնգի խրատող,
Գլխաբաց ման կրգայ ոտներն են չարուխ,
Ուրիշների ոտնամանին չի հաւնի։

Ինքն է կացնի կարօտ ուրագմ չունի,
Անձին պաշտպան մահակմ չունի,
Մահակից ջոկ ձեռքին դանակմ չունի,
Զինուորների հրացանին չի հաւնի։

Դրութիւնը վատ է ու սիրտը նախանձ,
Աշխարհը ման կրգայ գոռոզ ու վնհանձ,
Ծուռ աչքով է նայում միշտ այլոց կանանց,
Ընորհալու պատուիրանին չի հաւնի։

Տանից կայքը կնոջից գողնայ ծախէ կը,
Քանի գնայ բանն ու գործը ձախէ կը,



Կինը գանգատ կանի իրան կախէ կը,
Դատաւորի հրամանին չի հաւնի։

Ո՛չ թշնամի, ո՛չ բարեկամ կը ճանչէ,
Հազար մարդ անարգէ նա չի ամաչէ,
Զօր ու գիշեր բանդի մէջ կը ննջէ,
Բանդի դուռն պահապանին չի հաւնի։

Չունի աշխարհի մէջ թանկագին անուն,
Հանգստութիւն չունի, գիշեր ցերեկ քուն,
Բազում ունի խախուտ, վերջը չկայ տուն,
Կայսերանիստ օթևանին չի հաւնի։

Նրա պէս բարձրամիտ ես, երդիշ Փիզահի,
Համբաւդ է բազմաթիւ դու քիչ Փիզահի,
Ո՛չ գիր գիտես ո՛չ էլ գրիչ, Փիզահի,
Բարձրամիտքդ քերականին չի հաւանի։

## ՏԱՃԿԱՆ ՉԱՔԻ.

Փառք տուր Արարիչիդ,
Ով մարդ Փրկիչիդ,
Զօրացուր գրիչիդ,
Տխուր մի մնայ։

Փափագ լեցուցիչիդ,
Մի տրտմիր շատիդ քշիդ,
Ակնարկէ ձախ ու աջիդ,
Ամուլ մի մնայ։

Ճարէ քեզ հաստատ յոյս,
Սրտիդ խրախոյս,
Գոչէ քո Տէր Յիսուս,
Նրա մայը սուրբ կոյս։

Թէ ունիս սրտիդ բոյս,
Կստանաս քեզ լոյս,
Միշտ հեռատես եղիր,
Ու կոյը մի մնայ։

Իմ խրատս լսիր, սիրելի ընկեր,
Ձքեզ լոյս երեսով գեղեցիկ պատկեր,
Մոքիցս չես ելնի ցերեկ ու գիշեր,
Յունքերդ կամար է, աչքերդ լապտեր,
Թերթիչներդ է Ֆիղահ երգիչին սուսեր,
Միտքդ զումարացուր, ցուր մի մնա։

ՆԻՏԱՑԻ ԵՂԱՆԱԿ.

Ծնուած օրէս մինչի այսօր տխուր եմ,
Ցաւ քաշելու համար աշխարհ եմ եկէ,
Ա՜խ քաշելով միշտ սիրտս կըտրորեմ,
Ցաւով լցուած գործքով տկար եմ եկէ,
Մահի թագաւորը ինձ ընծայ տուեց,
Լացն ու թացը իմ աչքերիս նուիրեց։

Իմ վշտերս ես ում ասեմ իմանայ,
Ցաւս իմացող մարդիկը կըզարմանայ,



Խեղճ ցաւալի մարդը ուր կուզէ դնայ,
Ինձի նման ցաւալի էլ կը լինի նա,
Մահուան թագաւորը ինձ ընծայ տուեց,
Լացը ու թացը իմ աչքերուս նուիրեց։

Միշտ կը թափի իմ աչքերէս անձրևը,
Այլ բոյս չիտայ, արմատ կեանքիս տերևը,
Խոժոռուել է իմ զլխիցս արևը,
Բաղդիս ձեռքէն ստացայ սուգ սևը,
Մահուան թագաւորը ինձ ընծայ տուեց,
Լացն ու թացը իմ աչքերուս նուիրեց։

Խեղճ Ֆիղահն եմ , օրերս անցաւ լալով,
Աշխարհի մէջ տրտում, տխուր ման գալով,
Բեզրայ ուրիշներուն ես խորհուրդ տալով,
Լացի ու պատմեցի ցաւս զգալով,
Մահուան թագաւորը ինձ ընծայ տուեց,
Լացն ու թացը իմ աչքերուս նուիրեց։

ՀԱՐՈՒՍՏ ՈՒ ԱՂՔԱՏԻ ԿՌԻՒԸ.

Հարուստն ու աղքատը վիճաբանուեցան,
Սկսեցին մարտնչել և իրար մօտիկ,
Մինչև անգամ իրանց կեանքից յետ կեցան,
Ճըչացին, գոռացին ինչպէս արտուտիկ։

Հարուստն ասաւ, աղքատ ես եմ քու տէրը,
Քեզի գրաւել է իմ գանձիս սէրը,

Գլխիդ կըթօթափեմ քո սեաւ հերը,
Կը թողնեմ մերկաբաց ոտքդ անկօշիկ։

Աղքատն ասաւ, մենակ դուն ես փոդաւորը,
Քեզ պէս շատ է կեցել մոլորը սգաւորը,
Ունիմ ստեղծող և վեհ թագաւորը,
Նա է բուսնեցնող վարդ կամ ծաղիկ։

Հարուստն ասաւ, տես քո հագած հագուստդ,
Հազար տեղով կապկապած է հագուստդ,
Ինձ նման չի լինի խղճուկ ապրուստդ,
Մէկ օրմ չես տեսնի քեզի երջանիկ։

Աղքատն ասաւ, ես իմ Աստուածս կ'լուսամ,
Նա կուտայ բաժինս ամեն ամէ ամ,
Ես վիրաւորուած չեմ, որ հետդ խօսամ,
Լռուած է բերանս ինչպէս աղունիկ։

Հարուստն ասաւ, եթէ չորացած ես կանաչէ,
Միտը դումարէ խելքդ գլխիդ մէջ կանչէ,
Ես քեզի պէտք կը դամ ինձի լաւ ճանչէ,
Ի՞նչ անեմ որ ուսումովդ ես պզտիկ։

Աղքատն ասաւ, դիտես աշխարհը ցաւ է,
Մարդու մահի համար պատրաստի նաւ է,
Քո հազար ստակէդ իմ հինգս լաւ է,
Գուզես դու միշտ զոչէ ինձի անշալիկ։

Հարուստն ասաւ. ուսումով չես արեղայ,
Ամեն մի խօսքերէդ դառ հոտ կը հեղայ,



Կապի նման նստած կեցար ով տղայ,
Քեզի հարկաւոր է անիւով ճռնիկ։

Աղքատն ասաւ, եթէ ձիրք ունիմ հաստատ,
Չեմ մնայ հոգևոր խղճալի աղքատ,
Եթէ ես սիրէի ոսկի կամ արծաթ,
Քեզ նման կը լինէի հարուստ անդրանիկ։

Հարուստն ասաւ քեզի ճարէ ուսուցիչ,
Ուսումդ առար պատրաստ պահէ թուղթ գրիչ,
Գանձն է ամեն մարդու բաղձանք լեցուցիչ։
Է ամենայն գոցուած դռան բանալիք։

Աղքատն ասաւ, միթէ ես եմ անուսում,
Իմ ցաւ ու վշտերս գնամ խօսեմ ում,
Խղճալի բերնիդ մէջ խօսքերդ ես փոխում,
Չէ ես շնորհք ունիմ թռչուն վաղանցիկ։

Հարուստն ասաւ, շատ մի խօսիր հակառակ,
Տասը գանձով քեզի կանեմ խայտառակ,
Ամիսներով տունդ չի վառուի կրակ,
Կրակի կարօտ ես ինչպէս թիթեռնիկ։

Աղքատն ասաւ, ես չեմ անճար ու յիմար,
Քեզ պէս հարուստներին թողեր եմ տխմար,
Գաղափարս բարձր լեզուս է ճարտար,
Կուզես վրատ չինեմ քանիմ կրնատիկ։

Հարուստն ասաւ աղքատին եթէ լսես ինձ,
Հացի տեղ չես ուտէ աւելուկ ու սինձ,

Քո տունդ չի ճարուի մի բուռն բրինձ,
Վառարանիդ չկայ փայտ կամ վառելիք։

Աղքատն ասաւ, բաւ է խօսես դուն ի դուր,
Խօսքերովդ մի վէրքս արիր հարիւր,
Եթէ տէրս ես, ինձի մի տայ հաց ալիւր,
Դու չես ղրկող դերդաստանիս ուտելիք։

Հարուստն ասաւ, խօսքս լսէ պատուական,
Լսէ խօսքս շուտով տուր ինձ պատասխան,
Քեզնից պահանջում են այսքան դահեկան,
Տես մուրհակս քեզնից ունիմ առնելիք։

Աղքատն ասաւ, հին էրթերը կը էրնես,
Թէ գաղտնի խօսք ունիս ինչու կը կրկնես,
Տոկոսով գանձ տուիր շուտով ետ կառնես,
Դորանից աւելի բանմ ունիս խօսելիք։

Հարուստն ասաւ աղքատ կարճ է կանկունդ,
Աշխարհի մէջ թանկագին չէ անունդ,
Այսօր կամ վաղը կը բլի տունդ,
Մարդակախաղ կ'լինի, ինչպէս շուշանիկ։

Աղքատն ասաւ հարուստ դու ինձ յաղթեցիր,
Իմ բոլոր ցաւ ու վշտերէս ետ կեցիր,
Երի ինձի քիչմ ցորեն խոստացիր,
Դարունն եկաւ արտս չունի ցանելիք։

Քեզնից բարձրին միշտ տուր պատիւ, Ֆիզահի,
Որ լինիս անոնց մօտ ազնիւ, Ֆիզահի,



Մի սիրէ պարտք ու փոդ, կռիւ, Ֆիզահի,
Հոգի ճարէ տուրը գաւառին հասնելիք։

## Ղ Օ Շ Մ Ա Ց.

Երանի այն աւուր կուտամ յարաժամ,
Հայրենիքէս եթէ բարի լուր լսեմ,
Ողբամ ու կաղերսամ կենացը անգամ,
Վառուած բերանովս երգեր կսկսեմ։

Եթէ Տէրս տացցէ ինձ իմաստութիւն,
Այն բոպէին կունենամ ծանր բնութիւն,
Սրտիս մէջ չի ճարուի ոխ կամ դառնութիւն,
Ինչ պէտքս է, որ ես այլոց բամբասեմ։

Որը Ֆիզահն եմ, պապիս հին արմատիցը,
Ծնուել եմ հայկական որը աղքատիցը,
Մի քար է մնացել պապիս պատիցը,
Համբուրելով զոյգ աչքերիս կը քսեմ։

## Գ Ա Ր Ս Կ Ա Կ Ա Ն Դ Ա Մ Տ Ա Ն

Մի մեխին չկան չկայ է,
Առանց երկաթ բան չի լինի,
Մաղադորձը բանին ներկայ է,
Առանց մախաթ բան չի լինի։

Առանց գրիչ ինչ կը գրես,
Ինչով կիրքդ կը դաղարես,
Թէ դու դերձիկ շորակարես,
Առանց մկրատ բան չի լինի։

Դարտակ ջերդ ինչ կը խառնես,
Որքան կրնաս ձեռքդ տար ներս,
Խնդրէ որ Արարչից առնես,
Առանց հաւատ բան չի լինի։

Վարելու հող է հարկաւոր,
Գողին ահ, դող է հարկաւոր,
Ջերմդ փող է հարկաւոր,
Առանց արծաթ բան չի լինի։

Անջուր ջաղացը ինչ կաղայ,
Ամբարից կորէկ չի սողայ,
Ամեն մարդ որ լինի աղայ,
Առանց աղքատ բան չի լինի,

Անբանները եղան աբեղայ,
Ինչպէս, որ ես երգիչ եղայ,
Մօրից որ նոր ծնուի տղայ,
Առանցի կաթ բան չի լինի։

Առանց ոչխար չես ճարի գառ,
Գուցէ ման դաս աշուն ամառ,
Ո՞րտից բուսար անպիտան ծառ,
Առանց արմատ բան չի լինի։



Աշխարհին վարքն ու փառքը տես,
Համեմատիր էրա հանդէս,
Անպիտան ջոթ ինչ կը քամես,
Անկտաւատ բան չի լինի։

Մի մնայ մարդոց հակառակ,
Նրանք քեզ կանեն խայտառակ,
Թէ ունենաս օղի բաժակ,
Առանց գաւաթ բան չի լինի։

Խելքից աղքատ, լեզուով ճոխ ես.
Սրբաշէն օրէնքը կը կոխես,
Թէ դուրես կրօնդ փոխես.
Անյուսահատ բան չի լինի։

Ես Փիզահն եմ՝ անգրագետ,
Իմաստունների մօտ տգէտ,
Ես այլոց մօտն եմ անդէտ,
Առանցի վատ բան չի լինի։

## ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ.

(Ուսկաղաբի եղանակով)

1 Մի պարտէզից անց կենալիս տեսայ մի ծաղիկ,
Վարդ ծաղկի մօտն էր կանգնած մի հայի աղջիկ,
Աչքն ու ունքն լուսով պատած շքեղ դեղեցիկ,
Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,
Ով որ մեզ բամբասում է լեզուն առնուի։

2 Լուս երեսը տեսնելու պէս սիրուն զարկուայ,
Երակներս շարժուեցան գոյնով ներկուայ,
Իւր նազելի դէմքը տեսայ կեանքիցս զրկուայ,
Սիրունն իմս է ես սիրունին. ով կը խառնուի։
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի։

3 Նրա սէրն իմ սրտիս մէջ անբաժան սէր է,
Ինչպէս անմարելի կրակ իմ սիրտս կէրէ,
Այսքան սիրով տանջուելս Թող Աստուած ներէ,
Սիրունն իմս է, ես սիրունին, ով կը խառնուի,
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի։

4 Ակնարկելով իւր պատկերին դառայ խելագար,
Եթէ նրան ինձի չը տան մահուան եմ յօժար,
Քաղցը համեղ բերան ունէր և լեզուն ճարտար,
Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի։



5 Գիզահ արդեօք դու քաշել ես սիրահարութիւն,
Ամեն սիրոյն մէջ չի ճարուի յարաբերութիւն,
Թող թշնամին հազար անգամ անէ չարութիւն,
Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի։

## ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ.

(Սօլիկօի եղանակով)

1 Սիրուդ կրակէն վառում եմ,
Անմիտք թիթեռնակի նման,
Օտար երկիր թափառում եմ,
Պանդուխտ ծիծեռնակի նման.

2 Սէրդ ընկաւ ոսկորներս,
Թառամեցուց վարդ պատկերս,
Ո՞ւր ես նազելի ընկերս,
Հասիր սուրհանդակի նման։

3 Քեզ ուշ գտայ շուտ կորուցի,
Դուն էլ ինձպէս վառուած կեցի,
Աչքերդ չը համբուրեցի.
Վարդասէր սոխակի նման։

4 Դուն խոստացար ինձ հանդերձ չոր,
Ոչ թէ հինը այլ նոր է նոր,
Իսկ գոյնը ծիրանի կտոր,
Փայլուն արեգակի նման։

5 Սրի ինձ էլ քու մօտդ տար,
Կարօտս առնեմ լիակատար,
Սէրդ ինձի արաւ խելագար,
Դառում եմ ջուլֆակի նման։

6 Նամակս աչքերուդ քսէ,
Ցետոյ կարդալը սկսէ,
Տես վառուած Ֆիզահը ինչ կըսէ,
Կրկչող թուլֆակի նման։

## ԽՐԱՏ ԱՌ ԸՆԿԵՐԻ.

(Խամուրի եղանակով)

1 Ազնիւ ընկեր դարը վատ է,
Շատ դիտեցածդ քիչ խօսի,
Թէ խելք ունէ քեզ խրատէ,
Շատ դիտեցածդ քիչ խօսիր։

2 Կարդա սուրբ Աւետարանը,
Պահէ նրա պատուիրանը,
Սուր սանձ անցուր քո բերանը,
Շատ դիտեցածդ քիչ խօսիր։

3 Ծանը պահէ բնութիւնդ,
Մի մոռանայ ազնութիւնդ,
Գովէ. յարգէ հնութիւնդ,
Շատ դիտեցածդ քիչ խօսիր։



4 Ֆիզահի ճարը քեզ հանճար,
Խօսիր հասկացողի համար,
Շատ խօսողին կառեն յիմար,
Շատ դիտեցածդ քիչ խօսիր։

(Պարսկաց Քեարամու եղանակով)

1 Ջանք արա օրերդ ի զուր չանցնի,
Մարդ եղիր, բանական, անբան մի լինիր,
Անմիտ ընկեր ես քեզ խրատեմ քանի,
Միտք ճարէ բնական, անբան մի լինիր։

2 Անբան մարդը ոչքան որ հարստանայ,
Բանականի գործից նա չի հասկանայ,
Նա յիմարաց դասի մէջը կըմնայ,
Եղիր մարդ գովաբան անբան մի լինիր։

3 Տեսար որ մի մարդուց քեզ կը դայ վնաս,
Նրա հետ մի խօսիր բարեդ էրայ պաս,
Խրատս առ ստոր օրի չըմնաս,
Պահէ սուրբ պատուիրան, անբան մի դինիր։

4 Ես երեք տէրութեան հողեր քայլեցի,
Լաւ մարդկանցից բարի խրատ խլեցի,
Ֆիզահն ինչ որ կասէ դու լաւ հասկացիր։
Աշխարհն է տեսարան անբան մի լինիր։

## ՎԱՏ ԸՆԿԵՐ.

1 Վատ ընկերդ հեռանում է,
Կուզէ երթայ, թող տուր երթայ,
Լաւութիւնդ մոռանում է,
Գնալու է թոյլ տուր երթայ։

2 Նա որ յարգութիւնդ չը գիտէ,
Երած բարութիւնդ չը գիտէ,
Մարդ չէ մարդկութիւնդ չը գիտէ,
Գնալու է թոյլ տուր երթայ,

3 Որքան նրան քարոզեցի,
Ասի զէշից հեռու կացիր,
Վերջապէս չը համոզեցի,
Եթէ կերթայ թող տուր երթայ,

4 Ինքն իրան կարծում է դպիր,
Խելք չունի գլխի մէջ ընտիր,
Ֆիզահու պէս օտար երկիր,
Նա որ կերթայ, թող տուր երթայ։

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ ԵՐԳԸ.

*Ռուսաստանից Աղէքսանդրապոլ գալիս նուիրեցի իրան.*
(Սուլթան Ազիզի եղանակով)

1 Անունդ աշխարհը ծաւալեց,
Վեհափառ փառաւոր հայրիկ,
Բաղդդ քեզ հետ աշխարհը քայլեց,
Ովսաննայ, փառաւոր հայրիկ։



2 Բարի աստղի տակ ծնուած ես,
Հայի կրօնքով մկրտուած ես,
Ատծու օրէնքին սնուած ես,
Քարոզիչ կարգաւոր հայրիկ։

3 Ատուած տուեց քեզ գլխադիր,
Դու ման կը գաս ամեն երկիր,
Որքան քահանայ կամ դպիր,
Դուն արիր լուսաւոր հայրիկ։

4 Բան ծերոց խօսքը հաստատ է,
Լաւը լաւ է, վատը վատ,
Հայ ազգը քեզ հարազատ է,
Վիպասան լուսաւոր հայրիկ,

5 Հայ ազգը քեզ շատ կը սիրէ,
Քեզ համար ջանք կը նուիրէ,
Ֆիզահն ինչպէս երգիր զրէ,
Քեզի արժանաւոր հայրիկ։

## ՄԱՀԱՐՁԱՆ.

1 Հաղար ափսոս որ չուտ մեռաւ,
Մեհրապեան պարոն Միշոն
Աշխարհիցը կարօտն չառաւ,
Երիտասարդ պարոն Միշոն,

2 Նա ունէր աշխարհի մէջ փափագ,
Հասակովն էր նա պատանեակ,
Սրտումը չկար չար նպատակ,
Մեհրապեան պարոն Միշոն։

3 Եղբայրներին թողեց գնաց,
Նրան հրաւիրեց Աստուած,
Նա փոխարկեց կեանքը մեռած,
Պարոն Միշօն Մեհրապեան։

4 Նա էր Տփխիսու քաղաքացի,
Ունէր բարեկամ դրացի,
Ես դագաղը տեսայ ողբացի,
Պարոն Միշօ Մեհրապեանցի։

5 Նրա սուրբ հոգով ձեզ մխիթարէք,
Բարի հրեշտակը ձեզ օգնական ճարէք,
Երգս գերեզմանին դրէք,
Պարոն Միշօ Մեհրապեանցի։

6 Մեծ չէր հասակը փոքրիկ,
Ունէր քաղցրիկ լեզուն մեղրիկ.
Գովէք անունը անուշիկ,
Պարոն Միշօ Մեհրապեանցի։

7 Աշխարհից գնաց ստվերն,
Իւր շքեղ սիրուն պատկերն,
Բացակայ էր իւր ընկերն,
Պարոն Միշօ Մեհրապեանցին։

8 Նա էր միջակ ուսումնական,
Մի առողջ մարդ էր պատուական,
Այժմս մտաւ սև գերեզման,
Պարոն Միշօ Մեհրապեան։

*Երգիչ Փիզան Գարագաշեան. Մամիկոնեան.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ

# ՑԱՆԿ


Յառաջաբան . . . . . 3
Քանի որ իմ երգերս կարօտութիւն ունի . 4
1. Հողագործ . . . . . 5
2. Ցիմար մարդ . . . . . 6
3. Ուսում. . . . . 7
4. Գեղեցկուհի . . . . . —
5. Բաղդ . . . . . 8
6. Անբաղդ մարդ . . . . . 9
7. Սիրուհի . . . . . 10
8. Անյաջողութիւն 1885 թուականի . . . —
9. Ղօշմայ . . . . . 11
10. Իմ օրերը . . . . . 12
11. Քէչիչ օղլի . . . . . —
12. Բայթավուր . . . . . 13
13. Ողորմած մարդ . . . . . 14
14. Հրդեհ 1884 թ. . . . . 15
15. Քեսարամի . . . . . —
16. Արմենուհի . . . . . 16
17. Ուսումնական . . . . . 17
18. Վատ խօսք. . . . . —
19. Բուսպայի դիւանի . . . . . 18
20. Իմ վիշտը . . . . . 19
21. Դուբէիդ . . . . . —
22. Հարուստ ոմն . . . . . 20
23. Բարեկամ . . . . . 21
24. Սիրա . . . . . —
25. Գանգատ բաղդից . . . . . 22
26. Բիաղ ուսուլի . . . . . 23

27. Թաւրէզի . . . . . 23
28. Գանգատ իր անձից . . . . 24
29. Ղօշմայ . . . . . 25
30. Հիճրան քեարամի . . . . . —
31. Ծաղկաղարդի երգ . . . . . 26
32. Դուբէիդ . . . . . 27
33. Սէմայի . . . . . —
34. Մուխէմմէզ . . . . . 29
35. Նաքարատ-Դիւանի. . . . . 30
36. Հողագործ . . . . . 31
37. Ղէլէնտէրի . . . . . 32
38. Խօսք առ աշակերտն . . . . . —
39. Ունայն աշխարհ . . . . . 34
40. Խաժիկ—մաժիկ աչեր . . . . . 35
41. Միւսէդդէս-Դիւանի . . . . . 37
42. Գիրեանի . . . . . —
43. Մշեցու երգ . . . . . 38
44. Քիւչէտ ղէլէնտէրի . . . . . 39
45. Գազել Դիւանի . . . . . 40
46. Գազել Ղէլէնտէրի. . . . . 41
47. Տաճկական չէքի . . . . . —
48. Միւստէզէտ. . . . . 42
49. Միւստէզէտ . . . . . 43
50. Մարաքեայ դիւանի . . . . . —
51. Առ սիրելին . . . . . 44
52. Ծանոր կեցիր լիար դաս. . . . . 45
43. Միւխէմմէզ . . . . . 46
54. Գազել սէմայի . . . . . 47
55. Սէլիս գազել . . . . . 48
56. Գազել դիւանի . . . . . —
67. Երգ Ծննդեան. . . . . 49
58. Թօփխանայ դիւանի . . . . . 50
59. Իմ ջուխտակին . . . . . —
60. Ղէլէնտէրի միւխէմմէզ . . . . . 52
61 Սոխակ . . . . . 53
62. Քեարամի . . . . . 54
63. Թիթեռ . . . . . —
64 Աշխարհ . . . . . 55
65. Քեարամի . . . . . 56
66. Կռունկ . . . . . —
67. Ղէլէնտէրի Միւխէմմէզ . . . . . 57
68. Խեին խրատ, սեին ասպոն . . . . . 58
69. Սաղը դիւանի . . . . . 59
70. Հիճրան Քեարամի . . . . . 60
71. Վարդ կօշիկ . . . . . —
72. Մաամմա . . . . . 62
73. Դէսիթան . . . . . 63
74 Գովաբանութիւն առ հարսանեաց և սեղանի կառավարչին . . . . . 70
75. Զքաւորութիւն . . . . . 71
76. Վատ մարդ. . . . . 72
77. Դիւանի . . . . . —
78. Միւխէմմէզ Սիօնի. . . . . 73
79. Պարսկաց երգի թարգմանութիւնը . . 74
80. Զեղած բան. . . . . 75
81. Տուբէիտ . . . . . 76
82. Խայեալի դաստան . . . . . 77
83. Эмилію Христіановичу Страдовскому. . 82
84. Առ կապիտան Ստրադովսկի . . . . 83
85. Խօլերայ . . . . . 84
86. *** . . . . . 88
87. Միւստազեատ. . . . . 89
88. Ղազալ դիւանի . . . . . 90
89. Ղօշմա . . . . . —
90. Երգ առ սիրական. . . . . 91
91. Աղաւնեակ աղջիկ.. . . . . 92

92. Երգ մեծատան . . . . . 93
93. Տաճկական չաքի . . . . . 95
94. Նիտայի եղանակ . . . . . 96
95. Հալուստ ու ադքատի կռիւը . . . . 97
96. Ղօշմայ . . . . . 101
97. Պարսկական դաստան . . . . —
98. Երգ սիրահարութեան . . . . 104
99. Երգ սիրահարութենան . . . . 105
100. Խրատ առ ընկեր . . . . 106
101. Պարսկաց քեարամու եղանակով . . . 107
102. Վատ ընկեր . . . . 108
103. Վեհափառ Հայրիկի երգը . . . —
104. Մահարձան . . . . . 109

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ